

ՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԴՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ԳԱՂԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ

ՎԱՋԷ ՂԱԶԱՐԵԱՆ
vatcheg@gmail.com

Ստորեւ ներկայացուող տեղեկագիրը քանի մը տարի առաջ լուսանկարած էինք Երուսաղէմ այցի մը ընթացքին: Զայն մեքենագրելու եւ ծանօթագրելու աշխատանքի ընթացքին, պարզուած էր խորագրային էջին յաջորդող էջին (Ը539 համարակալեալ) բացակայութիւնը լուսանկարներու շարքէն, որով հարկադրաբար յետաձգուած էր անոր հրապարակումը՝ ծրագրելով ստուգել բացակայող էջի պարագան Երուսաղէմ նոր այցի մը ընթացքին:

Այդ այցը իրականացնելէ առաջ, սակայն, դիպումաձաքար կը պարզուէր թէ մեր կողմէ նորայայտ նկատուած տեղեկագիրն այլեւս դադրած էր նորայայտ ըլլալէ, որովհետեւ Դոկտ. Ռուբէն Օ. Սահակեան բնագիրն ամրորոցութեամբ լոյսին բերած էր արդէն *Բանբեր Հայաստանի Արխիւների* գիտական ժողովածուին 126րդ համարին մէջ¹:

Պարզուող այս պատկերին ի տես, անհրաժեշտ կը դառնար Սահակեանի հրատարակած օրինակը անցնելով ստորեւ յիշատակուած աղբիւրներու շարքին, բաղդատել մեր պատրաստածին հետ եւ այս նոր իրականութեան լոյսին տակ որոշել թէ արդեօ՞ք կրնար արդարացուիլ անոր հրատարակութիւնը մեր վերձանած տարբերակով եւ ծանօթագրութիւններով:

ԱՌԿԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաջին Աշխարհամարտի շրջանին թրքական ճակատի վրայ ցարական Ռուսաստանի արձանագրած յաջողութիւններէն ետք վանեցիներու տուն դարձին եւ յատկապէս 1917ի ռուսական Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք արեւմտահայ հողերու վրայ գտնուող ռուսական բանակի հեռացման յաջորդած զարգացումներուն, այդ զարգացումներուն հետեանքով Վասպուրականի մէջ անհրաժեշտաբար ստեղծուած հայկական ժամանակաւոր կառավարութեան, ապա նաեւ իրենց ռազմական յաջողութիւններով գինովցած թրքական ուժերէ գերեվարուելէ կամ կոտորուելէ խուսափելու նպատակով Վանի եւ շրջակայքի հայութեան դէպի Արեւելեան Հայաստան եւ Պարսկաստան հարկադրական վերջին նահանջին վերաբերող արձանագրութիւնները - յուշագրութիւն թէ ռուսմասիիութիւն - անտեսելի չեն եւ բոլորը միատեղ բաական մանրամասն պատկերացում կու տան իրողութիւններու եւ դէպքերու զարգացումներուն մասին:

Մեր տրամադրութեան տակ գտնուած եւ մեր ուշադրութեան յատուկ առարկայ դարձած այդպիսի գլխաւոր արձանագրութիւններ են եղած ստորեւ

թուարկումները, զանց առնելով համապատասխան շրջաններու օրաթերթերով եւ շաբաթաթերթերով հաղորդում տեղեկությունները²:-

1. Եղիշէ Վարդանեան, *Վասպուրականի Նահանջ Քիրոցը*, տպագրութիւն «Ազգ»ի, Պոսթոն, 1920³:

2. [Թէոդիկ], «Վանայ Անկախ Կառավարութիւնը», *Ամէնուն Տարեցոյցը, ԺԵ. Տարի, 1921*, հրատարակութիւն եւ տպագրութիւն Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1921, էջ 109-13:

3. Արմենակ Մաքսապետեան, «Վասպուրականի Իշխանութիւնը» բաժին, էջ 105-12⁴, (*Վասպուրական՝ Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի Տասնեփնգամեակին Առթիւ 1915-1930*, հրատարակութիւն՝ Վասպուրականի Հայրենակցական Միութեան (Թաւրիզ), Մխիթարեան Տպարան, Վենետիկ - Ս. Ղազար, 1930)⁵:

4. Հմայեակ Մանուկեան, «Դէպքերը Վասպուրականում (1914-1918)», *Վէմ Հանդէս Մշակոյթի եւ Պարմութեան*, համարներ ԺԸ. (էջ 51-63), ԺԹ. (էջ 73-77) եւ Ի. (էջ 90-95), ինչպէս նաեւ համարներ ԻԱ. (էջ 88-95) եւ ԻԲ. (էջ 72-77), Փարիզ, 1937 եւ 1938:⁶

5. Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, որոշ ընդմիջումներով՝ Ը. տարի, 1930:10(94)էն մինչեւ Ժ. տարի, 1932:4 (112):

6. Արսէն Հացագործեան, «Ազատագրում Վասպուրականի Կարճատեւ Ինքնավարութիւնները Առաջին Համաշխարհային Պատերազմին (Ականատեսի Յուշեր)», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 1969: 1⁷:

7. Սիրաք Սարիաղեան, *Կեանքիս Յուշերից, Գիրք Ժ.*, Հրատ.՝ Հայկական Ծարտարապետութիւնն Ուսումնասիրող Կազմակերպութեան, Երեւան, 2007⁸:

8. Շատախցիներ Անդրեաս Եսայի Գիվանեանի եւ Հայրիկ Մանուկի Մուրատեանի, ինչպէս նաեւ վանեցի Ղազար Ղազարի Գեորգեանի յուշերը համացանցային հետեւեալ կայքին մէջ՝ http://www.armeniapedia.org/wiki/The_Armenian_Genocide:_Testimonies_of_the_Eye-Witness_Survivors_-_Testimonies_1-49 (19 Նոյեմբեր 1919ի դրութեամբ):

9. Ռիֆէն] Օ. Սահակեան, «Վանի Հայութեան 1918 թ. Մարտեան Նահանջը Պարսկաստան», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, թիւ 2011:1-2, էջ 336-62:

10. Աւետիս Յարութիւնեան, «Վասպուրականի Նահանգային Ինքնավար Կոմիտարութեան (Երկրորդ Կառավարութեան) Գործունէութիւնը», *Պարմաբանասիրական Հանդէս*, 2013:3, էջ 37-52⁹:

Մեր ներկայիս հրատարակել փափաքած վաւերագրին եկաւ աւելնալ Սահակեանի պատրաստութեամբ հրատարակուած վերոնշեալ օրինակը:

Հիմնուելով վերոյիշեալներէն Եղիշէ Վարդանեանի յուշագրութեան վրայ, կարելի է ըսել թէ՛ Ռուսաստանի Փետրուարեան Յեղափոխութեան ազդեցութեամբ 1917ի Ապրիլին վանեցիներ արդէն Կովկասի Հայոց

Բարեգործական Ընկերության գրասենական մեջ խորհրդակցելով կազմած էին Շրջանային Վարչութիւն մը, որ պիտի ըլլար «վաղանցուկ կառավարութեան սաղմը»՝ անդամ ունենալով Կոստի Համբարձումեանը (լիազօր ներկայացուցիչ Համառուսական Քաղաքներու Միութեան), Գրիգոր Օհանջանեանը (լիազօր ներկայացուցիչ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան), Թիշկ Ներսէս Տէր Թովմասեանը, Սամուէլ Մեսրոպեանը, Արմենակ Մաքսապետեանը, Սեդրակ Հիւս Փանոսեանը եւ Բարունակ Կապուտիկեանը, եւ որոնց պիտի հրափրուէին միանալ դաշնակցականներէն Հմայեակ Մանուկեանն ու Տիգրան Պաղտասարեանը, ռամկավարներէն Մկրտիչ Աճեմեանն ու Նոյնիքն Եղիշէ Վարդանեանը, իսկ հնչակեաններէն՝ Սիրաք Սարիատեանը¹⁰:

ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԸ

Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան երուսաղէմ պահպանուող դիւանաթուղթերուն մէջ կը գտնուի Ը538-Ը558 համարակալումով եւ էջերը դերձանով իրարու միացուած տետրակ մը, որ կը կրէ «Տեղեկագիր Վանի Հայ. Ժամանակաւոր Կառավարութեան» խորագիրը:

Ակիզքէն մինչեւ աւարտ մէկ անձի ձեռագրով գրառուած տեղեկագիրը կ'աւարտի հետեւեալ Նշումով. «... այսքան իբր կապարուած իրողութիւն պաշտօնական համարել անհրաժեշտ կը համարենք եւ այդ առթիւ կը ստորագրենք»: Սակայն ի բացակայութեան ստորագրութեան մը կամ ստորագրութիւններու, բնականաբար անկարելի կ'ըլլայ ճշտել թէ փաստաթուղթը կրած է մէկ ստորագրութիւն՝ ենթական յոգնակիով ներկայացնելով իր անձը, թէ՛ նաեւ ստորագրութիւնները տուեալ պահուն հեղինակին մօտ գտնուած իրազեկ այլ անձերու: Նոյնպէս՝ բնականօրէն կ'առաջանայ ենթադրութիւն մը, թէ այս փաստաթուղթը կրնայ պարզապէս ընդօրինակեալ պատճէնն ըլլալ ստորագրութիւն կրող բնօրինակի մը:

Ամեն պարագայի, վաւերագրին հեղինակին անունը կը մնայ անձանօթ:

Բնագիրն ընթերցողը կը տարուի մտածելու թէ անոր հեղինակը կրնայ եղած ըլլալ ժամանակաւոր կառավարութեան անդամներէն մին, կամ, առնուազն, մասնակից մը զինական գործողութիւնները մշակող խորհրդակցական նիստերուն:

Ուղղագրութիւն, բառապաշար եւ քերականութիւն ցոյց կու տան տեղեկագրողին (կամ բնագիրը արտագրողին) անձին մէջ մէկտեղումը Վանի բարբառին եւ արեւմտահայ ու արեւելահայ տարրերու, եւ լեզուական այսպիսի տարրերու միախառնումը եւ մանաւանդ ը եւ ն որոշիչ յօդերու յաճախադէպ բացակայութիւնը կը յուշէ թէ հեղինակը կրնար ըլլալ Վան ծնած, բայց ուսումը Թիֆլիս կամ Վաղարշապատ ստացած անձ մը: Սակայն բնագրին մէջ սողոսկած կարգ մը ուղղագրական թերութիւններ կը մղեն մտածելու թէ հեղինակը հաւանաբար առիթ չէ ունեցած հիմնատր

ուում ստանալու, եթե իրողության համապատասխան է Ներսիսեան կամ Գեորգեան ճեմարանի մէջ ուսած ըլլալու ենթադրութիւնը:

Օրինակ, բնագրին մէջ բացառական հոլովի պարագային կը հանդիպինք թէ՛ *է* եւ թէ՛ *ից* հոլովածներուն: Նոյնպէս ակներեւ է ներ յոգնակերտի փոխարէն անի յաճախ *եր* յոգնակերտի գործածութիւնը (օրինակ՝ *անձնատրութիւններ* են.):

Ձայնափոխեալ «ու»ն հետետողականօրէն արձանագրուած է «ուով (օրինակ՝ *գինորական*, փոխանակ *գինորականի*):

Տեղեկագրողը կարգ մը պարագաներու մը անորոշ մասնիկին *ը*ը կրճատելով մ տառն ուղղակի կցած է նախորդ բառին վերջատրութեան (օրինակ՝ *օրմ*, փոխանակ *օր մըի*, *օրմալ* փոխանակ *օր մալ* կամ *օր մըն ալի*, *ծրագրիմ* փոխանակ *ծրագրի մըի*), իսկ էական բայերու պարագային զանոնք քիչ անգամ անջատած է նախորդ բաղադրամասերէն (օրինակ՝ *պէտքէ*, փոխանակ *պէտք էի*, *տակներ* փոխանակ *տակն էրի*, *գործածեն*, փոխանակ *գործած ենի* են.):

Բնագրի վերձանման ընթացքին մեր դիմագրաւած գլխատր մարտահրաւերներէն մէկն է եղած ձեռագրային նմանութիւնը բառամիջեան *ե* եւ *ի* տառերուն, ինչպէս նաեւ բառամիջեան կամ բառավերջի *տի*ն եւ *դի*ն, յատկապէս երբ հարցը կը վերաբերի օտար յատուկ անուններու, մանաւանդ որ հեղինակն ի՛նք հետետողական չէ եղած այդպիսի պարագաներու:

Բնագրին վերարտադրութիւնը չխճողելու նկատառումով, առանց անկիւնատր փակագիծերու օգտագործման կատարած ենք խմբագրական հպումներ, ինչպէս՝ բայի եւ գոյականի թիւերու հաշտեցումներ եւ այլ կարգի ուղղագրական եւ քերականական միջամտութիւններ, երբ բացարձակապէս անհրաժեշտ նկատած ենք զանոնք:

Հետետողական ըլլալու համար, վաւերագրին մէջ մէկէ անի տարբերակով հանդիպող յատուկ անունները - սակաւաթիւ բացառութիւններով (ինչպէս՝ Թաւրիզ/Դաւրիզ/Դաւրեզ անուան պարագային) - ներկայացուցած ենք մէկ ձեւով (օրինակ՝ անգլիական բանակի սպայ Ճորճ Կրէյսիի պարագային որդեգրած ենք Գրէյսի ձեւը, փոխելով տեղեկագրողին գործածած միւս՝ Գրէյսին, Կրէյսի եւ Կրէյսին տարբերակները):

Էջատակի ծանօթագրութիւններու շարքին տուած ենք հայերէն համազօրները բնագրին մէջ գործածուած օտար բառերու:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ՝ ՎԱԽԵՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԵՒ ԱՐԴԱՐԱՅՈՒՄ ԱՅՍ «ԵՐԿՐՈՐԴ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Մեզի կը թուի թէ հիմնականին մէջ այս տեղեկագրէն քաղելով եւ քանի մը տեղեկութիւններ յանելադրելով շարադրուած է Թեոդիկի հանրաձանօթ տարեցոյցին մէջ Վանի ժամանակաւոր կառավարութեան վերաբերեալ հատուածը, որ ներկայ բնագրին ամփոփումը կարելի է նկատել¹:

Քանի մը տուեալներ մեզ կը մղեն այսպիսի ենթադրութեան: Նախ՝ նմանութիւնը երկու շարադրանքներու ընթացքին եւ ենթահատումներու յաջորդականութեան: Ապա՝ նոյնութիւնը կառավարութեան անդամներու անուանացանկին, որ այլ աղբիւրներու մէջ յիշատակուած է տարբեր դասաւորումով: Ուշագրաւ է մանաւանդ թղթատարական-հեռագրական տեսուչին անուան նոյնութիւնը, գրուած՝ Սարգիս Զաւարեան, թէ՛ տարեցոյցին եւ թէ՛ բնագրին մէջ, երբ այլ աղբիւրներ մականունը ներկայացուցած են Զաւրեան կամ Զավրիւկ ձեւերով: Ուշագրաւ է նաեւ *խնամակալութիւն* բառին գործածութիւնը երկու աղբիւրներուն մօտ իբրեւ կառավարութեան բաժիններէն մին, երբ այդ բաժինը այլ աղբիւրներու մէջ յիշատակուած է *խնամատարութիւն* բառով:

Տակաւին կարելի է նշել նաեւ Վանայ Ծովու երկու ճակատներուն վրայ հաստատուած բանակայիններու եւ գնդացիներու թուաքանակին, ինչպէս նաեւ Զօրավար Նազարբէկեանի մինչեւ Փետրուար 1918 Ալլաթ ներկայութեան մանրամասնութիւնները:

Նոյնպէս, մինչ այլ աղբիւրներ կառավարութեան անդամները նկատած են վարիչ կամ կոմիսար, անոնք տարեցոյցին մէջ, ինչպէս՝ այս բնագրին, ներկայացուած են որպէս տեսուչ:

Բնականաբար, մարմիններուն կամ պաշտօններուն տրուած տարբեր անուանումներով կամ սահմանումներով՝ մարմինը կոչուի ժամանակատր *իշխանութիւն*, թէ *կառավարութիւն*, կամ գործերու *տեսուչ* նկատուին ենթակաները, թէ *վարիչ*, *նախարար*², *գործավար* կամ *կոմիսար*, ոչինչ կը փոխուի անոնց էութենէն կամ բնոյթէն:

Կրնայ հարց տրուիլ թէ արդեօ՞ք տեղեկագրողը յատուկ նպատակով իր տեղեկագիրը ներկայացուցած է Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան եւ այդ պատճառով ան յայտնուած է պատրիարքութեան դիւանաթուղթերու Երուսաղէմ գտնուող բաժնին մէջ, ուր կը գտնուին Թեոդիկի պատկանող կամ անոր ձեռքէն անցած զանազան այլ նիւթեր: Արդեօ՞ք տեղեկագրէն կը բացակայի էջ մը, որ կրած պիտի ըլլար հեղինակային ստորագրութիւն(ներ): Արդեօ՞ք տուեալ բնագրի հեղինակին վերաբերեալ որեւէ ակնարկութիւն կրնայ գտնուած ըլլալ դիւանաթուղթերու զանազան տրցակներէն մէկուն մէջ:

Հետաքրքրականօրէն, պատասխանը կը գտնենք ո՛չ թէ դիւանաթուղթերու տրցակներուն մէջ, այլ՝ նոյնինքն հեղինակին մօտ:

Արմենակ Մաքսապետեան իր վերը յիշատակուած աղբիւրին իբրեւ ծանօթագրութիւն կը նշէ. «1918 թ. Սեպտեմբերին» Համալսարանի մէջ,¹³ ընկերներու առաջարկով գրեցի Վասպուրականի Իշխանութեան Պարմութիւնը, երբ դեռ շարտոր էինք, բոլորիս յիշողութիւնը թարմ էր, ունէինք քանի մը թուղթեր: Բաքուէն եկած Արշակ Սաֆրաստեան օրինակ մը խնդրեց այս գրածքէն: Բաղդադի մէջ այդ օրինակէն հալոյ մը վերցուցած է Տ. Զաւէն Պապրիարք, իսկ ասորմէ լեպոյ օգտուած է Պ. Արշակ Ալաօյաճեանը եւ Ազգ. Հիւանդանոցի մէկ տարեցոյցին մէջ տպագրելու պատ-

է, իբրեւ սեփական հեղինակություն: Դժբախտաբար այս տարեցոյցն անգամ ձեռքիս տակ չունիմ: Տասներկու տարիներ լեպոյ, երբ կը փորձեմ գրի առնել մեր իշխանութեան կեանքն ու գործը, յիշողութիւնս կը դաւաճանէ, խիստ կը ցափմ որ ժամանակին աւելի լայնօրէն չկատարեցինք մեր պարտականութիւնը: Այն պիտի նկատել ուրուագիծ մը»¹⁴:

Ուրեմն համարեա հաստատապէս կարելի կ'ըլլայ ըսել թէ այս «ուրուագիծ» վաւերագրին հեղինակն է Արմենակ Մաքսապետեան, թէ տեղեկագիրը պէտք է աւարտած ըլլայ Իրաք հասնելէ ետք՝ նոյնիսկ եթէ անոր պատրաստութեան ձեռնարկած էր Համատանի մէջ, եւ տեղեկագրին ամբողջացումը որոշապէս կատարուած պէտք է ըլլայ 22 Նոյեմբեր 1918էն ետք, որ տեղեկագրին մէջ րացայայտօրէն նշուած վերջին թուականն է: Պաղատի մէջ տեղեկագիրը յանձնուած է Զաւէն Պատրիարքի¹⁵, որ Զինադադարի հռչակումէն քիչ ետք պիտի վերադառնար Պոլիս եւ զայն յանձնէր, այլ փաստաթուղթերու շարքին, Ալայաճեանի, որ ներքին պետն էր Քաղաքական Ժողովի 17 Օգոստոս 1919ի նիստի որոշման համաձայն ստեղծուած Տեղեկատու Դիւանին¹⁶: Ալայաճեան, իր հերթին, տեղեկագրէն օգտուելով պիտի պատրաստէր անստորագիր «Անկախ Հայաստան» ընդարձակ շարադրանքը¹⁷, Թեոդիկի՝ տարեցոյցին եւ ո՛չ թէ «Ազգ. Հիանդանցի մէկ տարեցոյցին» մէջ կատարելու համար «Վանայ Անկախ Կառավարութիւնը» ենթախորագրեալ տեղեկատուութիւնը:

Կրճատեալ վիճակով Թեոդիկի *Ամէնուն Տարեցոյցին* մէջ, իսկ համարեա ամբողջական վիճակով *Բանբեր Հայաստանի Արխիւների* ժողովածուն մէջ հրատարակուած ըլլալով հանդերձ, վաւերագրին ա՛յս հրատարակութիւնը կը նկատենք անհրաժեշտութիւն, որովհետեւ այս օրինակը արդարութիւն կը կատարէ ժամանակաւոր կառավարութեան անդամ Մաքսապետեանի՝ անստորագիր վաւերագիրն ուղղակի առնչելով իր անունին, ապա նաեւ ուսումնասիրողներու կը ներկայացնէ աւելի հարազատ պատճենը Սահակեանի հմտալից ներածականով լոյսին տրուած օրինակին, ուր մեր բաղդատութիւնը երեւան բերած է կարգ մը ուղղման կարօտ պարագաներ:

Տակաւին, այս վաւերագրին առնչումը Մաքսապետեանի անուան կարեւոր կը դառնայ անով, որ հեղինակին աւելի ուշ, ոչ նոյնքան թարմ յիշողութեամբ հրատարակած յօդուածին մէջ գտնուող շեղումներ վերագտնեն իրենց ճիշտ հունը եւ պատմաբաններուն ներկայանայ իրողութիւններու ճշգրտման եւ յստակացման հնարատրութիւն:

Վերջապէս, ան կարեւոր է նաեւ անոր համար որ իր պարունակած տեղեկութիւնները նիւթ կը հայթայթեն ազգամիջեան յարաբերութիւններու պատմութեամբ զբաղողներու, քանի որ հոն կը տողանցեն, հայերու կողքին, ասորի, ռուս, անգլիացի, ամերիկացի, քիւրտ, թուրք եւ պարսիկ դերակատարներ:

ԲՆԱԳԻՐԸ

Տեղեկագիր Վանի Հայկական ժամանակաւոր Կառավարութեան
1917 Ղեկ. 1 – 1918 Ղեկ. 1
Վանից-Քաղդաղ

1917 թ. Մարտ ամսի ռուս լեղափոխութիւնը, ինչպէս Ռուսաստանի բոլոր ազգութիւններու, այնպէս եւ իր) գրաւած Տաճկահայաստանի¹⁸ մէջ ապրող հայ ազգաբնակչութեան առանձին ոգեւորութիւն պատճառեց: Այդ առթիւ կը մտածուէր որ կարելի պիտի լինէր ընդհանուր ժողովրդական ուժերի միացումով յաղթական լինել պատերազմի ճակատի վրայ, բարեխելու գրաւած Տաճկահայաստանի դրութիւնը:

Մասնաւոր ջանքերու շնորհիւ յաջողութեց Պետրոգրադի կեդրոնական իշխանութեան հսկողութեան ներքեւ կազմել գրաւուած Հայաստանի առանձին իշխանութիւն, որու կենտրոնը եղաւ Թիֆլիս, իսկ մինչեւ նոյն տարուայ Օգոստոսին ան ճիւղեր ունեցաւ Վանի, Էրզրումի, Երզնկայի, Բայազետի եւ Տրապիզոնի մէջ:

Վան իր բացառիկ հանգամանքների շնորհիւ, ի՞նչ կազմուած իշխանութիւն մանաւանդ իր վրայ անլի ուշադրութիւն գրաւեց, երբ մասնաւորապէս ռուս լեղափոխութիւնը հակառակ մեր յոյսերուն Ռուսաստան քանդեց, որով ռուս մեծածաւալ բանակն ալ քայքայուեց, իսկ անկէ վերջ Վան պարտաւորուեց մէկ կողմէ թափուր մնացած ճակատներ պահել, եւ միւս կողմէ երկիրը կառավարել, անհամեմատ փոքր ուժերով: Հոս հարկ կը համարենք ընդլայնել քիչ մը մեր ըսածները զայն բաժանելով երկու մասի, եւ խօսիլ իւրաքանչիւրի մասին առանձին առանձին:

Այդ բաժանումներն են մէկը քաղաքացիական բաժին իսկ միւրը զինուորական:

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Վան բաժանուած էր հետեւեալ շրջաններու.-

ա. Քաղաք եւ իր արուարձաններ	9305 ասորի	2326
բ. Հայրց-Ձոր	1127 եզտի	160
գ. Բաշգալէ	1500 թուրք	225
դ. Արճակ	3500 հայ	23,597
ե. Սարայ	850 [ընդհանուր]	26,30
զ. Թիմար	6715	
է. Բերկրի – Կալա	450	
ը. Արճէշ – Աջավազ	150	23,597 ¹⁹

[1]917 Ղեկտ. ամսուայ մէջ կատարուած վիճակագրութեան մը համաձայն այդ շրջանների մէջ կ'ապրէր 26,308 բնակչութիւն, որոնցմէ 2326 ասորիներ, 160 եզտի եւ 225 թիւրքեր էին²⁰:

Սոյն թուի մէջ չեն հաշուուած քրդեր որոնց թիւ ամբողջ Վանի նահանգի մէջ 20,000-է անլի էր:

Երկրի եւ քաղաքական ընդհանուր պահանջներ նկատի ունենալով պէտք տեսնուեցաւ Վանի մէջ հայ իշխանութիւն մը կազմելու, երբ արդէն ռուսական 10,000-նոց բանակ եւ մօտ 300 քաղաքացիական զործերու ռուս պաշտօնեաներ երկրէն մեկնեցէր էին դէպի Կովկաս եւ Ռուսաստան:

Հայ իշխանութիւն կազմուեցաւ հետեւեալ պատասխանատու անձնավորութիւններէն.

- 1.- Կոստիա Համբարձումեան²¹ նահանգ[ապետ] եւ արտաքին գործերու տեսուչ²²
- 2.- Յովհաննէս Հայրապետեան²³ նահանգ[ապետի] օգնակ[ա]ն եւ խնամակալութեան տեսուչ
- 3.- Գրիգոր Գէորգեան²⁴ զին[ուորական] գործերու տեսուչ
- 4.- Հմայեակ Մանուկեան²⁵ ներքին գործերու տեսուչ
- 5.- Արմենակ Մաքսապետեան²⁶ երկրագործ[ական] գործերու տեսուչ
- 6.- Սամուէլ Մետրոպեան²⁷ ելեւտական գործերու տեսուչ
- 7.- Զաւէն Կորկոտեան²⁸ պարենաւորման գործերու տեսուչ
- 8.- Բժ[իշկ] Ներսէս Տ[էր] Թովմասեան բժշկական գործերու տեսուչ
- 9.- Սարգիս Զաւարեան փօստ-հեռագր[ա]կ[ան] գործերու տեսուչ

Վերոյիշեալ ինն անձնատրութիւնները ունէին իրենց պաշտօնին համեմատ առանձին պաշտօնեաներ, որոնց ընդհանուր թիւը 130-ի կը հասնէր:

Զինուորական բաժանմունք իբր առանձին ճիւղ, առայժմ անոր մասին խօսիլ կը թողոյնք, իսկ միւս ճիւղերի մասին առանձին առանձին կը խօսինք:

1.- ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ.- Վերոյիշած գաւառները ունէին առանձին իշխանութիւն ներքին գործերու տեսչի հսկողութեան տակ. իսկ ամէն մի գաւառի ժողովուրդ ունէր ներկայացուց[չ]ական խորհուրդ իր գաւառապետի կողքին: Երկրի կարգ կանոնի վրայ հսկելու համար կազմուած էր ոստիկանութիւն, որի թիւ 200-ի կը հասնէր: Գաւառի գաւառապետ կը նշանակուէր ներքին գործերու տեսչի կողմէ գաւառի ներկայաց[ուց]չական խորհուրդի հաւանութեամբ. ներքին գործոց տեսչութեան տակն էին նաեւ հետեւեալ մասերը:

Ա.- Կրթական գործ.- Վանի հայ իշխանութեան տրամադրած գումարէն գատ մեր դպրոցներու համար մեզ օժանդակեցին երկրի ժողովուրդը եւ Թիֆլիսի առժամեայ խորհուրդը: Անցեալ տարուայ Դեկտեմբերին ունէինք 25 դպրոց, 47 ուսուցիչ, 1220 երկսեռ աշակերտ. դպրոցներու ամսական ծախսն էր 6765 ռուբլի:

Ընդհանուր զինուորագրութեան պատճառաւ ստիպուեցինք մեր դպրոցները փակել Դեկտեմբերի վերջ, երբ ուսուցիչները անցան նորաբաց Զինուորական Դպրոցին մէջ. սպաններ եւ մարզիչներ պատրաստելու համար:

Բ.- Առուրոր.- Վերջին տարիներու յաճախակի պատահարներու հետեւանքով երկրի շուկան թուրքովին կողոպտուած եւ արտաքին յարաբերութիւններէ խզուած էր: Մասնատրապէս ջանք թափուեցաւ բարեկամական յարաբերութիւն պահել քրդերի հետ ներքին առուտորի համար, իսկ միւս կողմէ ապահովել Վան-Խոյ եւ Վան-Բայազետ ճանապարհները, որպէսզի աւետարականները ազատ երթեւեկութիւն ունենան: Բաական է ըսել որ հազուադէպ նիպերը շատացան եւ անոնց արժէքը զգալիօրէն պակասեց: Նաեւ արտահանութիւնը սկսեց կանոնաւորուել յօգուտ տեղական ապրանքների. այս առթիւ արգիլեցինք մի կարգ նիպերի արտահանութիւնը.- ցորեն, պղինձ, ապակի, կաշի, եայլն:

Գ.- Հեղորդակցութիւն.- Նկատի ունենալով Վանէն դէպի Կովկաս եւ Պարսկաստան տանող ճանապարհներու մեծ կարեւորութիւնը, Վանի հայ իշխանութիւնը յանձն առաւ այդ ճանապարհների շինութիւնը: Միջոցներու չգոյութեան պատճառաւ նախ ստանձնեցինք Շահթախթ-Սավալի-Վան երկաթուղագծի շինութիւնը, որը երեսի վրայ ձգուած էր ոռոսների հետացումով: Արտաքին անմիջական օժանդակութիւնը նկատի ունենալով, ձմեռուայ ամիսներուն բանտորներ աշխատեցրինք պարտադրելով հայ ժողովրդին. բայց խոստացուած օգնութիւն չստանալով մի ժամանակ երեսի վրայ թողնուեց, երբ անգլիական Թիֆլիսի շտապի²⁹ անդամներէն Գաբիթան Գրէյսին³⁰ պայմանաւորուեց շինել այդ գիծը:

Նոյնքան կարելու էր մեզ համար Վանի Լճի նաարկությունը, որի կանոնադրման համար մենք թափուեցաւ գործածութեան դնելով ռուսերի թողուցած նաւերը, որոնք սակայն ամբողջութեամբ գործածութեան դնել [ինարաւոր չեղաւ] քարիւղ չունենալու եւ Կովկասից կտրուելուն պատճառաւ:

2.- *Պարենատրում.* - Յաճախադէպ կատարուած միտումնաւոր նահանջները քայքայած էին ժողովրդի տնտեսութիւնը, այնպէս որ ազգաբնակչութիւնը կը դժուարանար հաց հայթայթել: Այս առթիւ ժողովրդին օգնելու համար դեռ [1]917 թ. Վանի մէջ մի ճիւղ հաստատուած էր Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան³¹, իր հետ ունենալով պետական օժանդակութիւն: Սակայն Ռուսաստանի քայքայումով յիշեալ Ընկերութիւն եւս հետացաւ մեր երկրէն, որի ընթացքին Վանի հայ իշխանութիւն իր վրայ վերցրեց երկրի պարենատրման գործը:

Պարենատրման համար երկու միջոցներ ունէինք՝ արտաքին եւ ներքին. Արտաքինի համար կը բաւականանանք ըսել, որ անցեալ աշնան սկզբին հազիւ կարելի եղաւ Կովկասէն ստանալ 3000 փութ³² ալիւր, ինչպէս նաեւ քիչ քանակութեամբ շաքար, լուցկի, սապոն³³ եւ այլն, որոնք բոլորովին կը պակսէին երկրին մէջ:

Մեր ամբողջ յոյսը՝ մանաւանդ Կովկասից կտրուելէ վերջ, ներքին միջոցներն էին, եւ ինքը կարճ ժամանակէ վերջ կարելի եղաւ ունենալ քաղաքի մէջ մէկ եւ գաւառի մէջ հինգ պահեստներ, որոնք հաց կը հայթայթէին ժողովրդին:

Պարենատրման գործը դիւրացնելու նպատակով Վանի մէջ կազմուեցաւ Կօօպերատիւ³⁴ Ընկերութիւնը, որ իր մէկ ճիւղ ունէր Թիմարի մէջ: Կօօպերատիւ Ընկերութիւն բացաւ փութ եւ ճաշարան:

3.- *Երկրագործական.* - Ամմիջապէս նկատել տանք, որ այս ճիւղը դրական օգուտ չբերաւ Վանին, քանի որ իշխանութիւնը կը կազմուէր այնպիսի ատեն մը, երբ երկրագործական շրջան չէր եւ յետոյ երկրի գաղթը տեղի ունեցաւ գարնան սկզբին:

Ռուսների իշխանութեան օրով արդէն Թիֆլիսի Հայոց Փիղատնտեսական Ընկերութիւնը³⁵ իր մեծ օժանդակութիւնը բերած էր մեր երկրին: Հայ իշխանութիւն իր ձեռքն առաւ այդ բաժինը եւ անմիջապէս ձեռնարկեց կանոնաւորել ջուրերի ընթացքը, մաքրել քանդուած առուները ու լիճերը, գարնան համար պատրաստել բաւականաչափ սերմ[ն]ացու եւ երկրագործական գործիքներ, ռաւամասիքել երկրի մշակութեան ձեւերն ու կարիքները եւ պատրաստի ունենալ երկու միլիոն րուբլի պիստոնէ մը գարնան աշխատանքներու համար:

Վանի հայ իշխանութիւնը կը յուսար որ մօտալուտ գարունը ամէն կերպով օգտակար պիտի լիներ, հետեաբար պատրաստած էր ունենալ այնքան հաց յառաջիկայ հունձքին, որով կարելի լինէր կերակրել Վասպուրականի փախստական ժողովուրդը իր հողին վերադառնալու պարագային:

4.- *Խնամաբարութիւն.* - Խնամատարութիւն ըսելով պէտք է հասկնալ դրամական օժանդակութիւն աղքատների եւ զինուորների ընտանիքներին: Ռուս տիրապետութեան օրով պետութիւն կը նպաստէր երկրի մէջ եղած եւ երկրէ դուրս գտնուած ժողովրդին որոշ գումարով: Այս նպատակով Վանի մէջ գործած են [Կովկասի Հայոց] Բարեգործական Ընկերութիւն եւ Համառուական Բաղաձնների Միութիւն³⁶, որոնց հեռացումէն վերջ հայ իշխանութիւն անոնց ձգած գործը իր վրայ վերցնելով շարունակել սկսաւ: Դժբախտաբար մինչեւ Հոկտեմբերին հազիւ կարողացուեց այդ ուղղութեամբ եղած պարտականութիւնը կատարել բաժանելով 39,945 րուբլի: Այս գործի մէջ մեզ օգնեցին Ամերիկահայ Հայանպաստ Ընկերութիւնը³⁷, որի ներկայացուցիչ Պ. Վիլեամս³⁸ Վանի մէջ բացաւ բրդեղէնի աշխատանոց մը, ուր կ'աշխատէին մօտ 400 կիներ:

5.- *Բժշկական.*- Ռուսների իշխանության օրով Վանի բժշկական գործը ծանրացած էր Համառուսական Քաղաքների Միության եւ Կարմիր Խաչի Ընկերության³⁹ վրայ, որոնք բազմաթիւ ճիւղեր ունէին նահանգի մէջ: Ռուսների հեռացումով մասնագէտների սով յառաջ եկաւ, որով եւ իշխանութեան տրամադրութեան տակ եղած բժշկական գործի վերաբերեալ միջոցները շատ աննպաստ էին: Այնուամենայնիւ կարելի եղաւ հաստատել քաղաքի մէջ մի հիւանդանոց 50 մահճակալով, նաեւ գաւառներու մէջ ունենալ բժշկական կայաններ: Քաղաքի մէջ կար ամբուլատորիա⁴⁰ մը որը օր օրին կը քննէր դիմող հիւանդները, որոնց թիւը 50-է կ'անցնէր եւ բոլորն ալ ձրիաբար կը դարմանուէին: Բժշկական մասն ունէր քաւական ճոխ դեղարան մը:

6.- *Փոշո-հաղորդակցութիւն.*- Ներքնապէս նահանգի մէջ եղած հաղորդակցութիւնը բաւարար չափով կը կատարուէր, իսկ արտաքին հաղորդակցութիւնը չլաշուրեց կանոնադրել մասնագէտներու (անբաւարարութեան), գծերի քանդման եւ ճանապարհների անապահովութեան պատճառաւ:

Ներքնապէս երկրի մէկ ծայրէ միւս թելեֆօնի⁴¹ ցանցով մը պատռած էր. եւ այդ հանգամանք հաղորդակցութեան մեծ դիւրութիւն կ'ընծայէր. ունէին[ը] թելեֆօնի 19 կայաններ՝ չհաշուած քաղաքի մէջ գտնուած բազմաթիւ կայաններ, որոնք այս կամ այն պաշտօնատան մէջ էին հաստատուած: Բաշգալիի գիծը խանգարուած լինելով այդ գծի յարաբերութիւնը կը կատարուէր սուրհանդակներով: Վերոյիշեալ հաշուով հիսիսէն հարաւ 185 վերստ⁴² եւ արեւելքէն արեւմուտք 120 վերստ տարածութեան վրայ կարելի էր երկվալկոյնանի մը մէջ իրազեկ լինել նահանգի դրութեան:

7.- *Ելեմմուական.*- Դրամ չկար բացարձակապէս, այնպէս որ առանց կանխիկ դրամագլխի կազմուեց Վանի հայ իշխանութիւնը: Երբ գրաւուած Հայաստանի իշխանութիւն կազմուեց, մեր պ. նահանգապետ Թիֆլիսէ վերադարձաւ տարեկան չորս միլիոն լրութի] պիստոնէի խոստումով, սակայն քաւական է ըսել, որ ութ ամիսների ընթացքին Թիֆլիսէն ստացուեց միայն կէս միլիոն ռութի]:

Վանի հայ իշխանութեան բարձրագոյն խորհուրդը ելեմմուական տեսուչին յանձնեց երկրի հարկերու տասանորդ, հաց, տաւար, ջուր, կալուածք, ինչպէս նաեւ երկրի հարստութիւնը շահագործելու իրաւունքը, այդ է՝ ձուկ⁴³, աղ, բարակ⁴⁴, քարիւղ, քարածուխ, եայլս:

Արտաքին օժանդակութիւնէ զուրկ ելեմմուական տեսչութիւնը մասնատրապէս զբաղուեցաւ իշխանութեան պիստոնէի դասատրութեամբ, որուն հաշիւ կրցաւ ներկայացնել անցեալ Յունուարին: Այդ նախահաշիվ[ի] համաձայն երկրի քաղաքացիական եւ զինուորական բաժանմունքների տարեկան գումար կը հասնէր 10,500,000 ռութի[ի], որմէ 3,000,000 կարելի կը լինէր հայթայթել երկրի վերոյիշուած աղբիւրներէ:

Բայց երբ դրամապէս անելի ներդուցինք, այն ժամանակ ստիպումը Փետրուար ամսին հրապարակ հանուեցաւ 164,000 ռութի գումար մը՝ 5, 10, 25, 50 եւ 100 ռութիանոց թղթադրամ ներքին շրջանառութեան համար միայն: Այդ գումար ապահովուած էր մեր երկրի բարձրագոյն իշխանութեան կողմէ, ժողովուրդը սիրով ընդունեց եւ գործածել սկսեց, որովհետեւ միւս կողմէ այդ թղթադրամը ապահովուած էր անգլիական պետութեան Թիֆլիսի շտապի ներկայացուցիչներէն Գալիիթան պ. Գրէյսիի կողմէ. այս մասին յետոյ կը խօսինք մանրամասնօրէն:

Ռուսաստանի քայքայման պատճառաւ, կովկաս անիշխանութեան մատուցելով մենք կտրուեցինք անկէ եւ արդիւնք այն եղաւ որ մենք ի վերջոյ թողուցի[նք] Վանի

նահանգ եւ գաղթի ճամբան բռնեցինք, որի ընթացքին վերջացաւ նաեւ Վանի հայ իշխանութիւնը:

II. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Երբ Ռուսաստանի մէջ բոլշեւիկները յաղթանակեցին, Վան ըլլալով ռուսների կողմէ գրաւուած մի հողամաս, կրիտիքական⁴⁵ ռուպէներ սկսաւ ապրիլ, քանի որ ան շրջապատուած էր բրդերով ու տաճիկներով, մինչդեռ առանց անեկսիայի⁴⁶ եւ քուն-թիզուցիայի⁴⁷ կը հրահանգուէր ռուս զինուորներին հապճեպ թողուլ ճակատ եւ դառնալ իւրաքանչիւր իր հայրենիք⁴⁸: Բնականաբար ինչպէս Տաճկահայաստանի ամեն մի մասի, նոյնպէս եւ Վանի մէջ ազգաբնակչութեան ապահովութիւնը կանոնաորելու համար կանխակալ միջոցներ խորհելու [անհրաժեշտութիւն] պիտի զգացուէր եւ դա կը լինէր անմիջապէս թափուր մնացած ճակատները տեղացի զինուորներ ուղարկել, թշնամու յանկարծական արշաւանքներին դէմ դնելու համար:

Անցեալ Նոյեմբեր ամսին Վանի մէջ ոչ մէկ ռուս զինուոր կարելի էր գտնել, միա կողմէ՝ գրաւուած Հայաստանի կեդրոնական իշխանութիւնը յայտնած էր որ երկրի վարչական գործեր միայն կարելի էր կազմակերպել, նաեւ՝ ոստիկանութիւն, որն [1]917 Մայիս 1-ին կազմուեցաւ մօտ 200 հոգիէ բաղկացեալ, որոնք կը հսկէին երկրի կարգ ու կանոնին: Սակայն երբ Սեպտ. եւ Հոկտ. ամիսներին ռուս զինուորը թողեց Վան, այն ատեն Գեներալ Սիլիկով⁴⁹ խնդրեց տեղացիների անմիջապէս օժանդակութիւն: Այդ օժանդակութիւնը կը կազմակերպուէր բանակ մը ունենալու ատեն միայն, որն կազմելու սակայն հնարատրութիւններ կը պակասէին:

Այդ ատեններ Թիֆլիսի անգլ. շտապի անդամներէն պ. Գրէյսին Վան կը գտնուէր – Դեկտ. 26: Ասիկա իր կարգին եկաւ օժանդակելու Սիլիկովի առաջարկին եւ անգլ. շտապի անունով յանձն առաւ Վանի հայ իշխանութեան մասնատրապէս Զին. Բաժնի ամբողջ ծախքն ու նիւթականը հայթայթել: Այս առթիւ պ. Գրէյսին մանրամասն ցոյց տրուեցաւ բանակ մը կազմելու համար հայ իշխանութեան ունեցած բոլոր հնարատրութիւնները եւ գտնուեց որ եթէ յանձնին պ. Գրէյսի անգլ. կառնակարութիւն չօժանդակէ Վանի հայ իշխանութեան, վերջինս անկարող է իր ունեցած միջոցներով պահել Վանի նահանգի սահմանները:

Պ. Գրէյսի խորհրդի համաձայն անմիջապէս պարտադիր զինուորակոչութեան թիւը բարձրացաւ 18[-էն] 25-35, որոնց հոգալու պարտականութիւն իր վրայ վերցուց պ. Գրէյսին:

Վանի բանակի ամսական ծախքը, անոնց ոռճիկները, զինուորների ընտանեաց պահպանութիւնը, ճակատի պահպանման կարեւորութիւնը եւ այլն պայմաններ նկատի ունենալով, պ. Գրէյսին կը խոստանար Յունուար ամսէն սկսեալ պարբերաբար ամսական վճարել 500,000 ռուբլի, ինչպէս նաեւ տալ 20 գնդացի որ եւ 12 թնդանօթ իրանց մարզիկներով: Այս բոլորի հետ պ. Գրէյսին կը խոստանար զանազան թեքնիք օժանդակութիւններ, այլեւ անգլ. միջոցներով ու մասնազէտներով վերջացնել Շահթախթ-Քայազիտ-Վան երկաթուղագծի շինութիւնը, որն արդէն յանձն առած էր հայ իշխանութիւնը, բայց ինքն ալ երեսի վրայ թողած էր միջոցներ ու դիւրութիւններ չունենալու պատճառաւ:

Թափաղը Գրէյսին յանձնառու եղաւ նաեւ երկիրը ապահովել քրտական յարձակումներէ, որպէսզի մենք մեր ուժը գործածէինք միայն թուրք բանակի դէմ, առանց զբաղուելու ուրիշ թշնամիներով: Այս նպատակով պ. Գրէյսին Դեկտ.[ին] մեկնեց Խոյ, տեսնուեցաւ աւագակապետ Սմկոյի⁵⁰ հետ, պայմանաւորուեց բարեկամութիւն մը եւ Սմկոյի մէկ նամակն ալ գրուած հայ իշխանութեան ստացուեց, ուր Սմկոն կը

յայտներ իր տեսակցութիւնը պ. Գրեյսիի հետ, յետոյ կը հրահանգէր որ ինք մեծապէս կը փափաքի բարեկամ մնալ Վանի հայ իշխանութեան, եւ ամէն ատեն պատրաստ է անոր հրամանները կատարել եւ ընդ առաջ գնալ⁵¹:

Պ. Գրեյսին անցաւ Կովկաս Զուլֆայի վրայով, որպէսզի կարողանար իր խոստումը կատարել, բայց այլեւս չկրցաւ ան վերադառնալ Վան Կովկասի ներքին խռովութիւններու եւ մասնաւորապէս Գերմաններու դէպի Կովկաս յառաջանալու պատճառով:

Պ. Գրեյսիի խորհուրդի համեմատ, մինչեւ անոր խոստացած օժանդակութեան հասնելը, անհրաժեշտ էր սկզբնական աշխատանքների ձեռնարկում եւ եղածներով բաւականա՛նալ: Եւ բանակ կազմելու խնդիրը մասնաւորաբար կապուած լինելով նիփական մեծ գումարների հետ, դարձեալ Գրեյսիի եւ երկրի բարձրագոյն խորհրդի փոխադարձ համաձայնութեամբ ներքին շրջանառութեան համար հրապարակ հանուեցան փոխգիրներ, որոնց մասին մեր տեղեկագրի ընթացքին արդէն մատնանշեցինք:

Հոս կարելու կը համարենք յիշել որ երբ ռուսներ հեռացան, Վան մնաց Կերենսկիի⁵² իշխանութեան օրով կազմուած հայկական 5-րդ գումդը: Ան սկզբից ի վեր օժանդակեց մեր բանակի կազմակերպման եւ գործնական օժանդակութիւն բերաւ, տալով մարզիչներ, մասնագէտներ մէթրալիօզի⁵³ համար եւ պահելով յաճախ ճակատը տեղացի զինուորի հետ կողք կողքի:

Տակաւին ռուսների օրով հայ երկրապահ զօրաց խումբ ընդամեն 200 հոգի – որոնց մասին ակնարկեցինք – մասնակցած է քանիցս ռուս իշխանութեան կատարած հետախուզութիւններին եւ մեծապէս օժանդակած ռուս զինուորականներուն: Հոկտեմբ. Նոյեմբերին կատարուած հետախուզութիւններ դէպի Խոջաք եւ Շատախ փայլուն արդիւնքներ տուին, թշնամին մատնելով ահ ու սարսափի մէջ:

Սակայն գիտակ թշնամիի մտադրութիւններին, երբ Վանի հայ իշխանութիւն նահանգի վարչական եւ զինուորական պատասխանատուութիւն ամբողջապէս իր վրայ զգաց, ամենից առաջ ամենից անելի ջանք թափեց բանակը օր մ'առաջ կազմ ու պատրաստ ունենալ, որովհետեւ ինչպէս յայտնի է, թշնամին քաջալերուած ռուսների հեռացումէն, կը պատրաստուէր յարձակուելու եւ իր նախկին սահմաններին տիրանալու կրկին:

Նորակոչ զինուորները կրթելու անմիջական անհրաժեշտութիւնը աչքի առաջ ունենալով կազմուեցան Սպայական Դպրոց մը, ինչպէս նաեւ մէթրալիօզի խմբեր, որոնք կարճ ատենէն իրենց ընթացք աւարտելէ վերջ բանակի մէջ գործնական աշխատանքների լծուեցան:

Ռուսները քաջուելով մեզ թողուցած էին երկու թղանօթ. սրանք գործածող չունէինք: Թէեւ ամէն միջոց ի գործ դրինք մասնագետներ քերելով Կովկասէն, բայց չյաջողեցանք. իսկ մեր ուժերով ալ անհնարին եղաւ թղանօթ գործածելու մասնագիտութիւն սորվեցնել այդ առթիւ կազմուած խմբին:

Կովկասի հետ յարաբերութիւն ունենալու խնդիրը օր օրին անհրաժեշտ կը դառնար. այդ լրանի՝ եւ բանակի կարիքների համար կարելու համարուեցաւ նահանգապետի Կովկաս գնալը՝ օգնութիւն եւ տեղեկութիւն բերելու համար: Այս նպատակով ալ պ. նահանգապետ ճամբայ ելաւ Փետրուարի վերջեր Կովկաս գնալու, բայց Զանիկ չհասած լուր կը ստանայ որ Կամուրջ գիւղը թիւրքերը գրաւել են: Այս լուրը ստուգելու համար պ. նահանգապետ ծովով եւ Արճէշի կողմէ ցամաքով հետախուզութիւն մը կը կատարէ եւ իրապէս կը ստուգէ տրուած լուրին ճիշդ լինելը,

որով ճամբան առանց [ղեպի] Կովկաս շարունակելու քաղաք կը վերադառնայ մօտալուտ կացութեան մասին մտածելու համար:

Կը մնար օր մը շուտ բանակ կազմ ու պատրաստ ունենալէ վերջ ճակատներ ուղարկել: Այս աշխատանքների ընթացքին յաջողութեց Կովկասից տեղեկութիւններ եւ իրահանգներ ստանալ. որոնք կը թելադրէին սպասել եւ շարունակել սկստած աշխատանքները, յայտնելով որ օգնական ուժերը արդէն երեսնից Իզդիր հասեր են, շուտով Վան կը յառաջանան:

Միս կողմէ սակայն կը հասնէին հետեւեալ լուրեր. Մարտ 12-ին Էրզրում ընկած, Կարս, Արտահան, Ալեքսանդրապօլ թշնամու ձեռքն ընկած, Ղարաքիլիսէ, Ալաշ-կերտ դատարկուած, Բայազիտ վտանգի տակ. կը մնար Վան, կտրուած արտաքին աշխարհէն, անկին մը ընկած, թշնամուն դէմ դնելու աշխատանքով զբաղուած, երբ Մարտ 17-ին անակնկալ կերպով տաճկահայ բանակի հրամանատարութենէն ստացուած հեռագիրը կը հրահանգէր թողնել Վան եւ Կովկաս անցնել:

Վանի հայ իշխանութեան բարձրագոյն խորհուրդը Մարտ 19-ին բացառիկ ժողովի մէջ նկատի ունենալով երկրի պայմանները եւ Կովկասէն տրուած հակառակն լուրերը, որոնցմէ ոմանք նահանջելու հակառակ իրահանգներ կու տային, ժողովորդական ներկայացուցիչների հետ որոշեց առայժմ չնահանջել մինչեւ վերջնական հրահանգ, որի ընթացքին թերեւս հնարաւորութիւն լինէր Կովկասի հետ յարաբերութիւն ստեղծել եւ անգլիացիներէն օգնութիւն ստանալ:

Այս շրջանին Վանի բանակի թիւ կը հասնէր 2376 հոգի[ի], որոնցմէ 80 գնդացիոր [կրակող], որոնք տեղաւորուեցան Վանայ ծովու հարաւ արեւմտեան եւ հիսիս արեւմտեան ճակատներուն վրայ:

Զինուորագրութիւն ինչքան որ պարտաւորիչ էր, այնուամենայնիւ հետեւեալ բացառութիւններ Վանի հայ իշխանութիւն իր ուշադրութենէ չէ վրիպ[եցուց]ած, ան այդ աղթիւ նկատի է ոմանք բազմանդամ ընտանիքների խումբը, դաշտային աշխատանքները, քաղաքացիական բաժնի պաշտօնէութիւնը, ժողովորդական գործերու ղեկավարները:

Ամբողջ բանակ բաղկացած էր ին[ն] վաշտերէ, իւրաքանչիւր վաշտ ունէր 200-250 զինուոր, մէկ վաշտապետ, երկու հարիրապետ:

Զինուորական օրէնքով մենք ունէինք հետեւեալ ստորաբաժանումներ.

1.- զինուոր. 2. տասնապետ. 3. յիսնապետ. 4. հարիրապետ. 5. վաշտապետ: Այս բոլորի գլխին կը կենար զին. Գործերու տեսուչ իր երկու օգնականներով, որոնց հետ մէկտեղ կը կազմէր Զին. Խորհուրդը:

Բանակը զինուած էր մեծ մասամբ ֆրանսական լըքէ եւ փոքր մասով ռուսական մօսին հրացաններով. իսկ քաղաքապահ զօրքի ձեռք շուէտական սիստեմի⁵⁴ գէւքեր էին: Այս գէւքերի մի մաս ստացուած էր Թիֆլիսի կեդրոնական շտապէն, մի մասն ալ ռուսների թողուցածներն էին:

Բանակի պարենատրուած հետեւեալ կերպով էր.

Զինուորը կ'ապրէր կառավարութեան միջոցով: Ռուսների թողած ուտեստեղէնների պահեստները ամբողջութեամբ յատկացուած էին բանակին: Իւրաքանչիւր զինուորին օրական կը տրուէր.

հաց	1.75 ֆունտ ⁵⁵	շաքար	1/8 ֆունտ
բրինձ	.28 ֆունտ	խոլ	1/8 ֆունտ
միս	.50 ֆունտ	սապոն	1/5 ֆունտ ամսական

Կարետը կը համարենք [նշել], որ յաջողութեց զինուորներին հագուատ տալ. անբաւար[ար] չափով տրուած է կօշիկ, գլխարկ, շինեղ⁵⁶:

Զինուորի ռոճիկը դասատրոյած էր հետեւեալ կերպով:

1-	Զինուորի ամսական	90 ռուբլի
2-	Տասնապետին ամսական	110 ռուբլի
3-	Յիսնապետ ամսական	200 ռուբլի
4-	Հարիւրապետ ամսական	350 ռուբլի
5-	Վաշտապետ ամսական	375 ռուբլի
6-	Հրամ[անատարի] օգնական ամսական	600 ռուբլի
7-	Հրամանատար ամսական	800 ռուբլի

Եթէ այս բաժնի մէջ նկատի ունենանք բանակի հետ կապուած փոխադրական միջոցներու, հեռախօսի, գրասենեակներու, պահեստներու, զինուորական դպրոցի, բժշկական գործի համար ծառայողներին տրուած ռոճիկը, այն ժամանակ ամբողջ բանակի պիտոճէ[ին] Վանի հայ իշխանութեան յատկացրած ամսական ծախքը կը լինէր 380,155 ռուբլի:

Զօրքի փոխադրութիւնը մէկ տեղէ մի ուրիշ տեղ կատարուած միջոցին, փոխանակ անոր ուտեստը իր հետ փոխադրելու, նպատակայարմար համարուած էր որոշ հեռատրութիւնների վրայ ունենալ պոնկտեր⁵⁷ – սննդատու կայան – ուր զինուոր պիտի կրնար կերակրուել, հանգստանալ, եւ գիշերել. ամբողջ նահանգի մէջ կա[յին] 18 պոնկտեր:

Զինուորական զանազան պիտոյքների փոխադրութիւնը առանձին հսկողութեան առարկայ դարձած էր Զին. Խորհրդի կողմէ, որպէսզի կարելի լինէր արագացնել գործողութիւնները: Փոխադրական միջոցներ կը հաշտուէին կառքեր, սայլեր, ձիեր, ուղտեր, որոնք դրուած էին առանձին պաշտօնեաներու հսկողութեան ներքեւ:

Զինուորական զանազան պետքեր հոգալու համար կար արհեստանոց մը, ուր կ'աշխատէին հիւաներ, զինագործներ, թիթեղագործներ, երկաթագործներ եւայլն: Գարնան զինուորներին պետք եղած բանջարեղէններն ալ պատրաստելու հոգ տարուած էր, նախապէս մշակելով քաակական տարածութեան[եան]մը հողեր:

Վանի իշխանութեան ձեռք գտնուած բժշկական միջոցները մեծաւ մասամբ տրամադրուած էին զօրքին: Բժշկական տեսչի կարգադրութեամբ իր պաշտօնեաներէն մէկ մասը կը ծառայէր բանակի մէջ:

Նկատի ունենալու է նաեւ որ Վանայ Լճի հաղորդակցութիւն ալ Վանի իշխանութեան ձեռքն էր. թիւրքեր բնաւ նաւ չունէին, քայց մենք մի քանի նաւ եւ թնդանօթային նաւեր ունէինք:

Մինչեւ անցեալ Փետրուար, քանի որ Գեներալ Նազարբէկովի⁵⁸ բանակ կը գտնուէր Ախլաթ, լուրջ երկիւղ մը չկար հիւսիսէն – Առնիսի ճակատ. իսկ Արճէշ արդէն մեր ձեռքն էր. իսկ Ալջավազ գաւառը անբնակ էր: Բայց երբ ռուս բանակի քայքայման պատճառաւ Ախլաթը թողնուեցաւ, թուրք բանակ Կամուրջն եւս գրաւեց փորձելով Ալջավազն էլ գրաւել. այդ ատեն էր որ սկսուեց քաակական կարեւորութիւն տրուել այդ ճակատին:

Հարաւային ճակատը աւելի վտանգաւոր էր: Թուրք բանակի կեդրոն Գաւաշ գաւառը այդ ճակատի թուրք բանակի շուրջն էին հաւաքուած հարաւային գաւառներու հետեւակ ջրդերը, որոնք վաղուց ի վեր թշնամի ու պատուիաս էին եղած հայուն:

Հարաւային ճակատի մէկ մասը կը կազմէր Բաշգալի ճակատը, որը ապահոված էինք փորձաթիւ զինուորներով. նկատի ունենալով միշտ Մուսուլի ճակատը, ուրտեղից կը սպասէինք անգլ. յառաջխաղացումը, եւ մէկ ալ [կար] այն պարագան,

որ այդ շրջան Սալմաստի հետ կապուած լինելով այնքան վտանգ չունէր, քանի որ Սալմաստի մէջ պատրաստուած հայ նոր բաթայիօն անոր թիկունք կը գտնուէր:

Վերոյիշեալ աշխատանքներէից գատ ամէն կերպով Վանի իշխանութիւն ջանաց բարեկամութիւն պահել Չիլանի եւ Նօշարի քիւրտերի հետ, քանի որ վերջիններս Վանի նահանգի թիկունքն ըլլալով, հակառակ պարագային կրնային մեծ վտանգ սպառնալ երկրին: Ճիշդ այս նկատումներով նահանգապետ ինք եւ զինուորական պետերը մէկը անձամբ քանիցս այցելութեան գացին եւ քիւրտերի հետ փոխադարձ բարեկամութիւն կնքեցին:

Այս պայմանների մէջ Վանի իշխանութիւնը իր աշխատանքները յառաց կը տանէր երբ անցեալ տարուայ 1918 Մարտ 21-ին թուրքեր հարաւէն յարձակում գործել սկսեցին. բայց շնորհիւ մեր ուժեղ դիմադրութեան, անոնց յարձակումը ձախողուց եւ թշնամին կրկին յետ շարտուեց իր նախկին դիրքեր:

Միւս կողմէ կասկածուելով հիւսիսային ճակատից, կարգադրուեցաւ այդ կողմին հետախուզութիւն մը կատարել, որի ընթացքին մերոնց ցամաքէն եւ ծովէն նահանգապետի առաջնորդութեամբ գրաւեցին Ալջավազ, ուր մտեր էին թուրք յառաջապահներ, եւ ծովէն ալ ոմբակոծեցին Կամուրջ եւ Ախլաթ՝ մեծամեծ կորուստներ պատճառելով թշնամիի պահեստներին: Հետախուզութեան առթիւ բռնուեցաւ Չիլանի քիւրտերից 8 հոգի, որոնք յայտնեցին ի մեծ զարմանս Վանի հայ իշխանութեան, այն սերտ յարաբերութիւնների մասին, որ կար թուրք հրամանատարութեան եւ Չիլան-Նօշար քրդերու միջեւ. յայտնեցին միանգամայն որ թուրք հրամանատար Չիլանի աղաների հետ ունեցած յարաբերութեան ընթացքին երկուստեք համաձայնելով են յարձակիլ որոշեալ օրին – Ապրիլ 2 – ամբողջ ճակատների վրայ: Այդ յարձակման ընթացքին քիւրտեր խոտատեցր էին Առնիս պաշարել, Բերկրի[ի] կիրճ բռնել, նաեւ Սմկօյին եւս դողել որ Կօթօրի կիրճը փակէ:

Սոյն ծրագրի համաձայն արդէն Վան պաշարուած էր, եւ իրապէս որոշեալ օրին, Ապրիլ 2-ին, թուրքեր նախ սկսան յարձակիլ Ոստան[ի վրայ] հարաւային ճակատէն: Հոն քաակաւն ուժեղ դիմադրութեան հանդիպելով մեր կողմէ, միանգամայն երկրորդ օր յարձակում գործեցին Առնիսի ճակատէն ալ:

Թշնամիի ուժերի հետ համեմատած՝ մեր ուժերը շատ սակաւաթիւ էին եւ անպատրաստ. մենք Ոստանի ճակատ ունէինք 1000 զինուոր, մէկ պուլիմօթ⁹⁹, իսկ Առնիսի ճակատ 800 զինուոր, 4 պուլիմօթ եւ նաւային երկու թնդանօթեր, որոնք սակայն օդի մատախապատ լինելու պատճառաւ յաջող, կամ սպասածին պէս չգործածուեցին[ի], որով եւ վերջէն բնաւ արդիւնք չտուեցին[ի]:

Թուրք բանակի հետ, ինչպէս նախապէս պայմանաւորուած էին, քիւրտերն ալ միացան, որով Արճէշէն մեր յառաջապահներ քշելով իրապէս Բերկրի[ի] կիրճ փակեցին եւ Առնիսը պաշարման մէջ դրին: Թշնամին այս յաջողութենէն ոգետորած ուժեղ յարձակումով մը Ոստանի ճակատ պատուեց, որով մենք պարտաւորուեցինք ետ ճաշուել եւ յայտարարել որ ժողովուրդ սկսի շարժիլ դէպի Կովկաս:

Ապրիլ⁶⁰ ժողովուրդ Ջանիկ չիւսած Առնիսի մեր զօրամաս պաշարուելէ խուսափելու համար թողեց հիւսիսային ճակատ. իսկ Բերկրի[ի] կիրճ քիւրտերով զոգուած լինելով, այդ գծով Կովկաս անցաւ մեր ժողովուրդի 4-5000 հոգի միայն. իսկ Բերկրի[ի] կիրճ զոգուելէ [բացի], Ադրուալի եւ Նօշարի քիւրտերու դաւադրութիւններ պատճառ եղան որ Վանի Լճի կղզիներ մնացին մի քանի հազար ժողովուրդ, իսկ մնացեալների հետ Վանի իշխանութեան անդամներէ մէկ մաս Ապրիլ 6[-ին] ճամբան շեղեց դէպի Պարսկաստան, 12,000 զաղթականութեան հետ մէկտեղ:

Այրիլի 8-ին Կօթուր հասա մեր ժողովուրդ: Հոն Վանի նահանգապետի անունով նամակ մը գրուեցա Խոյի քօնսովի⁶¹ միջոցա պարսից Շահին⁶², յայտնելով ժողովրդի գալուստ եւ իրենց խնամատարութիւն [խնդրելով] Պարսկաստան գաղթող ժողովրդի վրայ:

Երկու օր նամակի պատասխան սպասելէ վերջ, ճանապարհ շարունակեցինք դէպի Պարսկաստան: Այրիլի 10-ին Սմկոյի քուրտերը Կօթուր կիրճի բերան փակեցին. հոն մօտ 100 զոհ, ահագին անասուններ եւ ժողովրդական ապրանքներ թողնելէ յետոյ, յաջողեցանք Եզտիքանդի վրայով Այրիլի 11-ին հասնել Սալմաստ: Դէպի Խոյ փախչող ժողովրդի մի փոքրիկ մաս – ինչպէս վերադարձող կիներէն իմացանք – Խոյ[ի] մէջ բոլորն էլ կը կոտորուին: Իսկ յետագայ փաստեր եկան ապացուցանելու որ Կօթուրի կոիւներուն Խոյի պարսիկ կառավարութիւն քիւրտերուն միանալով միատեղ մեր ճամբան փակել աշխատեր էին:

Սալմաստ հասնելով առաջին գործ եղա ժողովուրդ պարենատրել, եւ այս աղբիւ գնահատանքէ վեր է Սալմաստի հայ ազգաբնակչութեան օժանդակութիւնը Վանի հայ գաղթականի վերաբերմամբ:

Այս ատեններն էր Սմկոն դաադրութեամբ սպաններ էր ասորիների Մարշմոն⁶³ Մարտ 16[ին] Քօհնաշա[ի]րի մէջ, որի վրէժ լուծելու համար ասորիներ յարձակեր էին քիւրտ գիւղերի վրայ: Այսպիսով տեսակ մը մենամարտ էր սկսած քիւրտ-պարսիկներու եւ ասորիներու միջեւ: Այս պարտիզանական⁶⁴ կոիւներէն վերջ [կացութիւնը] այլեւս լուրջ ընդդէմ էր ստացած եւ կը սպառնար ամբողջ Սալմաստի ազգաբնակչութեան ապահովութեան:

Պարսիկներ մասնատրապէս մեր ժողովրդի եւ բանակի Սալմաստ հասնելէ վերջ սկսեր էին փաղաքական քաղաքականութեամբ մը վարուել հայերի հետ: Աօցիալ-Դեմօկրատ պարսիկ կուսակցութեան⁶⁵ պարագլուխներէն Նոպարին⁶⁶ յատկապէս Շարաբխան[ի]ից մեզ դիմեց եւ խնդրեց որ երկուստեք ջանք չխնայով ստեղծելու այնպիսի կացութիւն մը, որը կրնար վերականգնել Սալմաստի ընդհանուր խաղաղութիւն եւ պատճառ չդառնալ եղբայրասպան կոիւներին: Նոպարին Թիֆլիսէն նոր վերադարձած լինելով, տուա կարգ մը տեղեկութիւններ Կովկասի իրադարձութեանց մասին եւ յայտնեց նաեւ որ ինք անձամբ տեսակցած է Թիֆլիսի Հայ Ազգ. Խորհրդի իւր եւ համաձայնած որ թշնամութեան ոեւէ պատճառ չպէտք է ստեղծուի հայ եւ պարսիկ ազգաբնակչութեան հետ:

Մենք իբրեւ առժամեայ հիւրեր Պարսկաստանի մէջ, բնականաբար ամէն կերպով ընդհանր ապրել է գնայինք պարսիկ դեմօկրատիայի ցանկութիւններին, միեւնոյն անգամ սակայն անտարբեր չէինք կարող մնալ ասորիների եւ պարսից ու քրտերի միջեւ ստեղծուած հակամարտութեան վերաբերմամբ: Մեր պարտականութիւն կը համարէինք անպայման այդ տարրերու միջեւ եղած թշնամանք[ին] կերպով մը վերջ տալ. այդ կը պահանջէր ընդհանուր ազգաբնակչութեան շահը, այդ կը պահանջէր Սալմաստի մէջ ստեղծուած դրութիւնը:

Վանի ժողովուրդը հասնելով Սալմաստ, Վանի իշխանութեան մնացեալ անդամներ Սալմաստի հայերի հետ հայկ. կոմիտէ մը կազմեցին, որու ձեռք պէտք էր կենտրոնանար ժողովրդի զինուորական եւ պարենատրման գործը: Այդ մարմին իրրեւ արտայայտիչ Սալմաստի ամբողջ հայ ազգաբնակչութեան իրաւունք ունէր վարել ազգամիջեան յարաբերութիւն ասորիների, պարսիկների եւ քրտերի հետ:

Սակայն որպէսզի Սալմաստի բաղկացուցիչ տարրերու ամբողջի մտայնութիւններ եւ ցանկութիւններ ըստ կամս չընթանան, անհրաժեշտ էր ունենալ կենտրոնական[ն] մարմին մը, որը տուն տար ամէն գործերուն: Իրապէս կազմուեց հայ, ասորի

եւ ռուս Կեդ[րոնական] Մարմին մը, որու պարտականութիւն էր երկրի ընդհանուր ապահովութեան եւ ժողովրդի ինքնապաշտպանութեան մասին հոգ տանել, նաեւ պատասխանատու կերպով վարել պարսիկների հետ պաշտօնական քաղաքականութիւն, որ կը վերաբերէր ազգամիջեան թշնամութիւններ հարթելու եւ վերացնելու:

Պարսիկ դէմոգրատիայի հանդէպ հայերին ունեցած ցանկութիւնները սակայն դրական արդիւնք չէին տար, որովհետեւ նոյն պարսիկներ եւ ըրտերն էին որ Վանից գաղթող հայերի վրայ յարձակուեցին, ոմանց սպաննեցին եւ կողոպտեցին՝ տանելով անասուններ եւ այլ կարգի գոյքեր:

Պարսիկներ ինչքան մէկ կողմէ ազգամիջեան համերաշխութիւն կը քարոզէին, այնքան միւս կողմէ պատրաստութիւններ կը տեսնէին Սալմաստի վրայ քայելու եւ ասորիներից վրէժ լուծելու: Բայց հայեր չէին կարող անտարբեր մնալ այս ավաշքարա⁶⁷ կատարուած իրողութիւնների հանդէպ. քանի որ ասորիներ կը նկատուէին մեզ իբրեւ դաշնակից եւ լինելով քրիստոնէայ տարր, չէր կարող երբեք մեր կողմէ անոնց վիճակը անկարեւորութեան մատնել: Հայերի գլխատոր մտահոգութիւնն էր համերաշխութեան եզր մը գտնել պարսիկների եւ ասորիների միջեւ: Երբ չյաջողուեց այդ բան, բնականաբար հայեր միշտ ասորիների հետ բարեկամ պիտի մնային, ինչպէս որ յետագային եղաւ:

Վանի ժողովուրդը սահմանակից մասերու վրայ տեղադրուած լինելով յաճախ ենթարկուած էր յարձակումներու եւ կողոպուտների: Ապրիլ 13-ին պարսիկ զինուած խմբեր յարձակեցան մեր ժողովրդի վրայ, որի ապահովութեան հսկող մեր խմբերի հետ կռուի բռնուեցին: Մերոնք տեղի տալով ժողովրդի հետ քաշուեցան դէպի Սալմաստի կենտրոնական] գիւղեր, սակայն կը թուր թէ պարսիկներ լուրջ պատրաստութիւններ ունէին, քանի որ առանց կենսալու անոնք կը շարժուէին դէպի Սալմաստ եւ իրապէս ալ առաջին պատեհութեամբ գրաւեցին Մուղանջուղ գիւղը, իսկ շրջակայ բլուրների վրայ խրամներ փորելով սպասողական դրութեան մէջ դրին մեզ եւ ասորիներին:

Այս վիճակի մէջ Ապրիլ 17-ին հայերի հասցէին նամակ մը դրկելով կը յայտնէին որ հայերը պէտք է չեզոք մնան եւ չխառնուեն ասորիներին, որոնց պատճելու համար իրենք միջոցներ ձեռք առեր են, աւելցնելով միեւնոյն ատեն որ պարսիկ կառավարութիւն միշտ բարեացակամ է եղած հանդէպ հայերի, հետեւաբար պատճառ մը չկայ որ հայեր այսպիսի խառն ռուպէին թշնամանան պարսիկների հետ:

Հայ կոմիտէն նորէն Սալմաստի Կեդ[րոնական] հտորիքի հետ խոհեմութիւն համարեց պատասխանել պարսիկներին, յայտնելով որ ոչ մէկ կողմն էլ ցանկութիւն չունի համաշխարհային այս անիրաւութեանց օրերին ազգամիջեան կոիւներ ստեղծելու, անհրաժեշտ է պատգամատրների միջոցաւ եզրակացութեան մը գալ եւ վերջ դնել ռեւէ խառնակութեան: Այս նպատակով ալ Տիլիմանի հեշիմ⁶⁸ եւ երկու ուրիշ պարսիկներ պարսիկ բանակատեղին ուղարկուեցին:

Այս բանակցութեան մէջն էինք երբ Ապրիլ 21-ին պարսիկ բանակի մի մաս Տիլիման մտաւ, ցրեց եւ բռնեց հոն քաղաքի համար դրուած ասորի պահակախումբը, միւս կողմէ սկսեցին Սալմաստի գիւղեր ոմբակոծել:

Վտանգը մօտիկացած համարելով մենք այնեա յարաբերութիւն խզուած համարեցինք, որով եւ մեր զօրքն էլ շարժման մէջ դրինք:

Ապրիլ 23-ին մեր զօրքը յարձակման դիմելով գրաւեց պարսիկների թնդանօթ եւ բաւական ռազմաթեքք, տալով մի քանի սպաննումներ եւ վիրատրներ. միւս կողմէ կը պաշարուի Տիլիման: Այս կոիւների ընթացքին հայերի մտահոգութիւնն էր փրկել Տիլիմանի պարսիկ ազգաբնակչութիւնը:

Ապրիլ 24-ին գրաուեց Տիլիման քաղաքը, հայ կոմիտէի ձեռք առած միջոցներու շնորհիւ անմիջապէս հաաքուեց պարսիկ անպաշտպան ազգաբնակչութիւն ասորիներու վերծիմնորութենէ պահելու համար, եւ խումբ խումբ դէպի Խոյ դրկուեց ի նշան այն մարդասպան արարքին, որ Խոյի կառավարութիւն ցոյց տուաւ Վանի ժողովրդի նկատմամբ Կօթորի կիրճէն վերջինիս անցած պարագային՝ յարձակելով եւ սրի մատնելով անպաշտպան ժողովուրդը:

Պարսիկներ այս անյաջողութենէն վերջ ուրիշ միջոցներով դիմեցին Սարայ հասած թուրք բանակի հրամանատարութեան եւ հրաւիրած էին զանոնք գալու եւ Սալմաստ գրաւելու: Իրապէս մեր ստացած տեղեկութիւնների համաձայն Ապրիլ 28-ին իմացուեց որ թրք. բանակը Կօթոր է հասած:

Հարկ անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել թիւրքերու ճիրաններէն ազատելու Խոյի մէջ գտնուած հայ եւ ասորի ազգաբնակչութեանց կեանքը: Այդ իսկ պատճառաւ Սալմաստի Կեղ[րոնական] Կոմիտէն վճռեց յարձակում մը գործել եւ ազատել Խոյի քրիստոնեաները: Այս որոշման գործադրութեան նպատուեցին այդ ատեն Ուրմիէն Սալմաստ եկող 200-ի չափ ռուս սպաներ, որոնք յօժարակամ Վանի բանակի եւ ասորական բաթայիօնի մէջ անցան. եւ պատրաստութիւններ տեսնուեցան որոշուած օրին յարձակուելու Խոյի վրայ բանի դեռ տաճիկներ Խոյ չէին մտած:

Այս աշխատանքներու մէջն էինք երբ Մայիս 11-ին Ուրմիէն հայ եւ Ասորի ժողովրդի ցանկութեան համաձայն նամակ մը ստացուեց, ուր կը յայտնուէր լետածգել որոշումը, որովհետեւ իրենք սերտ յարաբերութիւններ սկսած էին Ռեսայիդի Դեմօկրատ Կուսակցութեան հետ: Այդ նամակով կը յայտնէին նաեւ որ հայ-ասորի-պարսիկ պատգամատրութիւն մը շուտով Ուրմի պիտի գայ ընդհանուր համերաշխութիւն կնքելու համար:

Իրապէս այդ պատգամատրութիւն եկաւ Ուրմի եւ վստահացուց ասորի եւ հայ ազգաբնակչութեան, որ պարսիկ դեմօկրատիան միջոցներ ձեռք առած է ազգամիջեան թշնամութիւնը վերացնելու օր մ'առաջ:

Պատգամատրութիւնը բաղկացած էր հետեւեալներէ. Ատրպատականի առաջնորդ Ներսէս Եպիսկ. Մելիք-Թանգեանէ⁶⁹, Դաշնակցութեան ներկայացուցիչ պ. Յ. Ճերմակէ⁷⁰, Խոյի նահանգապետ Իջլայի Միւլքէ[ի] եւ Երկու պարսիկներ: Պատգամատրութիւնը կը յայտարարէր ու կը խնդրէր որ հայ-ասորական բանակը միանայ պարսիկ կառավարութեան՝ միատեղ օսմանցիներուն իրենց երկրէն վտնուելու համար, իսկ եթէ թիւրքը հակառակ պարագային յաջողեց Խոյ մտնել, այն ատեն պարսիկ կառավարութիւն Շարաբխանէից ռազմամթերք պիտի փոխադրէր Ուրմի եւ Սալմաստ, թրքական բանակի դէմ կռուելու: Իսկ եթէ այս միջոցն էլ չօգնեց, այն ատեն պարսիկ դեմօկրատիան միջոցներ ձեռք պէտք է առնէ նաեւրով հայեր եւ ասորիներ ապահով վայր մը փոխադրել[ով] այլ տեղ ուր յարմար նկատուի:

Ուրմի հասած պատգամատրութեան նպատակներին եւ ծրագիրներին մօտիկէն ծանօթանալու համար Վանի նահանգապետ պ. Կ. Համբարձումեան Մայիս 11-ին Ուրմի [գ]նաց⁷¹, ուր պատգամատրութեան հետ տեսնուել վերջ կը տեսնուի նաեւ տօքթօր Շէդի⁷² հետ որն ամերիկեան փոխ հիւպատոսի պաշտօն կը կատարէր: Տօքթ. Շէդ պ. Համբարձումեանին կը յայտնէ որ թիւրքեր Կովկասի մէջ հասեր են մինչեւ Ալեքսանդրապօլ, Երեանեան Նահանգի մէջ մեծ ընդհարումներ են ունեցեր հայերի հետ, որոնք վերջէն հաշտութիւն են կնքած թիւրքերի հետ, որի համար եւ հայերին տրուած է հաաարակապետութիւն: Այդ առթիւ պ. Համբարձումեան ի պաշտօնէ կը յայտարարէ Տօքթ. Շէդին որ իրենք չեն ենթարկուելու Երեանի

հայկ[ական] հասարակապետության եւ ինչպէս մինչեւ այժմ թշնամի ենք եղեր տաճիկների, այնպէս եւ յետ այսու կը կոտենք մինչեւ վերջ: Այս պաշտօնական յայտարարութեան վրայ ալ Սալմաստի եւ Ուրմիոյ հայ ժողովուրդ թշնամի ընդունեց թուրքերուն եւ մինչեւ վերջն ալ կոտեց, առանց ըսել մը խաբուելու թուրքական խաբեպատիր քաղաքականութեան [դիմաց]:

Այս շրջանին արդէն թուրքեր խոյ մտեր էին եւ սկսեցին յառաջանալ նաեւ դէպի Սալմաստ: Վերջի օրեր թուրք բանակի հրամանատար Մուստաֆա Հաֆլըզէն⁷³ Մարիամ անունով հայ կնոջ մը հետ նամակ մը ստացուեց հայերին եւ ասորիներին ուղղուած, ուր տաճիկ հրամանատար կը յայտնէր թէ իրենք տեղեկացուցած են որ Դարիզէն հայեր եւ ասորիներ անձնատուութիւն են առաջարկել, ինքն ալ կ'առաջարկէ Սալմաստի հայ եւ ասորիներին անձնատուութիւն լինել, ի գոյր տեղ անգլիացիների վրայ յոյս չդնել, որովհետեւ վերջիններս Մուսուլի եւ Դարիզի շրջան չարաչար պարտութեան են մատնուել: Հետեալքար ժողովրդի անմեղ արեան թափուելուն պատճառ չլինելու համար անհրաժեշտ է աճապարել եւ թուրքերուն յանձնուել:

Առանց որեւէ կարեւորութիւն տալու այս նամակին, հայեր եւ ասորիներ համերաշխ ընդհանուր գործը յառաջ կը տանէին, երբ Մայիս 17-ին թուրք բանակ սկսեց յարձակուել Սալմաստի վրայ: Թուրքերու միացած էին պարսիկ սարպազներ⁷⁴ եւ ասով բաւական մեծ բանակ մը կազմեցին: Մենք ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տուինք եւ պարտադրուցիւնք թշնամուն Մայիս 19-ին թողնել եւ քաշուել դէպի խոյ:

Այս կողմերի ընթացքին թուրքեր Ռեանտուզէն եւս շարժուել են դէպի Ուրմի միշտ սարսափի մատնելու մտադրութեամբ, բայց հոն եւս չարաչար պարտութեան մատնուելով թողեր ու հեռացել էին:

Ինչ էլ որ լինէր մեր ուժերը անսպառ չէին. մենք շատ լաւ գիտէինք որ օսմանցիներ օրը օրին իրենց բանակը կը կանոնաւորէին եւ բնական էր որ օր մ'ալ մեզ վրայ պիտի յարձակէին մեր յաջողութեանց վրէժը լուծելու համար:

Ասորիների հետ հայերն եւս չէին դադրել բանակը ուժեղացնելու եւ կազմ ու պատրաստ պահելու համար, միայն մի բան պարզ էր եւ որոշ՝ որ առանց Ուրմիի անմիջական օժանդակութեան չէր կարելի վերջնականապէս ապահովուած համարել Սալմաստի ազգաբնակչութեան ֆիզիքական գոյութիւն: Իսկ Ուրմին գիտակ մեր վիճակին, միշտ կը յուսադրէր, տեղեկացնելով որ Ուրմիի վրայ յարձակուող թրքական բանակը վերջնականապէս ջախջախուած է, թէ անգլիացիք թրքական բանակի թիկունքն են անցած Ռեանտուզի շրջանի մէջ, թէ Մուսուլ կը ռմբակոծուի անգլ. բանակի կողմէ, թէ Ուրմի վերջնականապէս ապահովուած է, այնպէս որ օգնական ուժեր ղրկուին Սալմաստ, անցնելով որ Դարիզի պարսիկ կառավարութեան հետ բանակցութիւններ վերջացած են, մեր բոլոր պայմաններ ընդունուած են եայլեւ խոստումներ ու յոյսեր:

Մարտ 27-ին Ուրմին պարսիկ, հայ եւ ասորի խառն պատգամատուրութիւն Վանի նահանգապետի հետ Սալմաստ եկաւ. Իջլալի Մուլք, որ Խոյի նահանգապետն էր, յայտնեց որ Խոյ-Ջուլֆա-Շարաբխանէ-Սալմաստ գծի վրայ թուրքեր 10,000-նոց բանակ մը կենտրոնացուցել են. պարսիկ կառավարութիւն միջոցներ է ձեռք առած զանոնք իր սահմաններէն դուրս հանելու:

Միւս կողմէ 3ունիսի 3-ին տեղեկացուեց որ թուրքեր Շարաբխանէից անցել են դէպի Թարիզ, այլեւս կարելի էր կռահել այն մտադրութիւններ զորս տաճիկական բանակ ծրագրած էր, եւ այն խարդախութիւններ զորս ի գործ դրած էին պարսիկ դեմօկրատիայի ղեկավարներ մէկ կողմէ թուրքեր հրապիրելով իրենց երկիր

պաշտպանելու եւ միա կողմէ մեզ խաբելու եւ համերաշխութիւն անուան տակ մեզ քայքայելու օր մ'ալ յանկարծակի(ի) բերելու:

Յունիս 3-ին Ղարաթափայէն, ուր կը գտնուէր թուրք բանակի հրամանատարութիւն, հայ եւ ասորիներուն գրուած նամակ մը ստացուեց ուր կը գրուէր. «Մենք պարսիկ կառավարութեան կողմէ նշանակուած ներկայացուցիչներս եկած են(ք) Խոյ մի շարք խնդիրներու մասին տաճկաց զօրքի Սալմաստի ճակատի մեծ հրամանատարի հետ խօսելու: Մենք խօսեցինք Ուրմիոյ եւ Սալմաստի մէջ եղած հայ եւ ասորի ժողովուրդների հանգստութեան մասին եւ հետեւեալը որոշեցինք. հայերու եւ ասորիներու ղեկավարներու հետ տեսակցութիւն մը ունենալ, որի համար ուղարկելու էք մի յանձնախումբ կազմուած հայերի եւ ասորիների եւ Ձեզ համար վստահելի անձնատրութիւններէ: Տեսակցութեան վայրը որոշուելու է Խոյի եւ Սալմաստի միջեւ պէտք եղած բանակցութիւն իրականացնելու համար: Յանուն մարդկութեան թերեւս կարելի լինի երկուստեք ցոյց տրուած բարեացակամ վերաբերմունքին (շնորհիւ) վերացնել մեծ դժբախտութիւնը եւ այսպիսով մնացածների կեանքի ապահովութիւնը ապահովել»:

«Կ'իմանանք որ աղա Իջլալ Մուլքն եւս Սալմաստ եկած է. եթէ կարիք կայ, նա էլ պատգամաւորների հետ միասին թող գայ:

«Այս նամակի պատասխանին կը սպասենք վաղը կէսօրին. եթէ որոշուած ժամին պատասխան չհասնի, մենք ստիպուած կը լինենք ետ գնալ: Ստորագրուած կրօնական յանձնախումբի նախագահ Մուքայլեմ իւլ Միւլքէն եւ Միրզա Մահմատ Ալի Խան»⁷⁵ տողուզ վզարայէն»⁷⁶:

Իջլալի Միւլք պատասխանեց հետեւեալ կերպով.

«Նամակը ուշ հասաւ, հայերի եւ ասորիների կողմէ ղրկուելիք ներկայացուցիչները կարող են գալ միայն վաղը, եւ կ'որոշուի վայրը:

«Այստեղ ես իմ գործերը վերջացրած եմ եւ կը սպասեմ նաակի մեկնելու համար»:⁷⁷ 1918 Յունիս 4 Ղալասար ժամ 11½:

Յունիս 6-ին Սալմաստի ճակատի կօմենդանտ⁷⁸ Մուստաֆա Հաֆըզէն կրկին Ղարաթափայից գրուած, ստացուեց հետեւեալ նամակ ի պատասխան Իջլալի Միւլքէն գրուած նամակին:

«Մեծարգոյ Իջլալի Մուլք [1]334 Յունիս 5

Ձեր ընկերներուն ուղղուած նամակը ստացուեց. նամակի պատասխանը ուշանալու պատճառաւ անոնք մեկնեցին Թաւրիզ: Անոնք հոս եկած էին կարգ մը խնդիրներ հասկնալու եւ թէ հայ եւ ասորիների վերաբերմամբ յանուն մարդկութեան ծառայութիւն մը մատուցանելու: Իմ նպատակները Մարիամ անունով հայ կնոջ մը միջոցով հայ եւ ասորիներին ուղղուած նամակով իմացուցած եմ արդէն. նորէն կրկնեմ որ Ձեր ճիշդ պիտի⁷⁹, կնոջ ու ծերերու թափուելիք արեան համար ի սրտէ կը ցաւիմ եւ ի տես այդ անմեղ զոհերի թափած արեան նորէն այդ ժողովրդի անհատներու արեան թափուելու պատճառ եղողները տեսնելով կը խղճահարուիմ. իսկ եթէ յանձնուելու եւ զոջալու առաջարկը ընդունուելու լինի, մի կերպ մեր մարդասիրութիւն կը ցուցնենք: Այս մասին եթէ կը ցանկաք անձամբ տեսնուել, դուք մինակ եւ եթէ յարմար կը նկատուէք անոնցմէ մէկ մէկ հոգի բանակատեղ գալ յարմար կը տեսնուի: Այս բոլոր ի գիտութիւն Ձեզ կը յայտնեմ:

Օսմանցի Գօմանդանտ Մուստաֆա Հաֆըզ»

Մասնատրուայէն հայեր տաճկաց բանակին յանձնուելու միտք բնաւ չէին կարող ունենալ: Հետեաբար կը մնար պատրաստուել եւ օրհասական կոհի մղել: Արդէն

իջալ Միսր եւ Յ. Ճերմակ Դարիզէն յոյսերնին կտրած, Յունիս 8-ին Ուրմի վերադարձան, իսկ պարսկական նաւեր շատոնց մոռցուած էին:

Նոյն օր ռուսներ յոսահատած իրերու այս կերպ վերջատրութեան համար, պարտաւորութեան խոյ գնալու եւ հակառակ պարագային թուրքերին յանձնուելու: Այս վտանգատր քայլի առաջն առնելու համար Վանի նահանգապետ պ. Կ. Համբարձումեան անմիջապէս ուղարկութեաւ հայ կոմիտէի կողմէ ռուսներ ջով խնդրելու, որ իրենց այդ վտանգատր քայլէ ետ կենան, քանի որ այդպիսով թէ՛ իրենք պիտի վնասուէին եւ թէ՛ անոնց միջոցով թշնամին մեր գաղտնիքներ իմանալով աւելի յաջող կերպով կը կատարէր իր յարձակումը: Ռուսներ մեզ անձանօթ պատճառաւ կը յայտնէին որ իրենք ասորիների խոստումներին չեն կարող հաւատը ընծայել, ամեցնելով որ եթէ հայեր իրենց պիտի օժանդակեն, իրենք պատրաստ են Վանի բանակի մէջ մտնելու եւ ամէն աշխատանք կատարելու: Հայեր համաձայնելով ռուսների հետ, յաջողեցան ետ կեցնել անոնք իրենց մտադրութենէն եւ ասորիների հետ միացեալ ոյժ մը կազմելով դէպի խոյ գնալու արշաւանքը կազմակերպելու միջոցներ ձեռք առին:

Ուրմին այս անգամ վերջապէս իր խոստումներ գործադրութեան դրաւ: Աղա Պետրոս⁷⁹ լուր տուաւ որ ինք 3000-նոց բանակով մը արդէն Խանթախթէ եր հասած Յունիս 11-ին:

Յարձակումը պիտի կատարուէր Յունիս 13-ին: Այդ առթիւ աղա Պետրոս աջ թետով պէտք էր անցնէր տաճկական բանակի թիկունք դէպի Շարապ-խանէն: Վանի բանակ 1200 հոգի ճակատէն պիտի յառաջանար թուրքերի կենտրոնատեղիի վրայ, իսկ Սալմաստի ասորական բանակ քօյսնէլ⁸⁰ Կանտրատեփի⁸¹ եւ ասորի Աղա Դաւուդի⁸² առաջնորդութեամբ՝ թուով 1000 հոգի, պիտի անցնէր ձախ թետով Կօթուրի կիրճը փակելու: Այս յարձակումներ պիտի ղեկավարէին մեր կողմէ հայ Չին. Մարմին նախագահութեամբ քօյսնէլ Սինէնիկօվի եւ ասորիների կողմէ Աղա Պետրոսի եւ քօյսնէլ Թափուտեփի կողմէ, որ նշանակուած է Ուրմի ընդի. հրամանատարութեան կողմէ:

Յարձակում սկսելէ առաջ Յունիս 11-ին մեր հետախուզող խմբեր հանդիպեցան թրքաց հետախույզ խմբերին. երկուստեք կռիւ տեղի ունեցաւ, որի ընթացքին թուրքեր թողին ու հեռացան: Յաջորդ օր խաղաղ անցաւ:

Յունիս 13-ի արշալույսին մեր կողմէ յարձակում սկսուեց, թշնամին յանկարծակիի եկած պաշտպանողական կռիւ մղել սկսեց, մենք անպատճառ յաջող կերպով պիտի կրնայինք թշնամին փախցնել, եթէ Աղա Պետրոս իրապէս միշտ յայտարարած ուժը իր հետ ունեցած ըլլար, որովհետեւ կռիւների ընթացքին միայն յայտնի եղաւ որ Աղա Պետրոսի ուժը փոխանակ 3000-ի միայն 500 հոգի էր, որոնք չկարենալով ծրագրի համաձայն աջ թեւից յառաջանալ, թշնամիի հակաշարձակման ենթարկուեցան եւ ցրուեցան: Մինչդեռ կեդրոն եւ ձախ թեւ իրենց յարձակումները յաջող յառաջ կը տանէին, թուրքեր խորտակելով աջ թեւ պարտաւորցրին մեզ կանգնեցնել մեր յառաջխաղացումը: Թուրքերի այս յաջողութիւն եւ Աղա Պետրոսի մինչեւ Խանթախթէ քաջուել տխուր կերպով անդրադարձան ձախ թեւի վրայ եւ, որտեղի ասորական բանակ եւս վիստած ետ քաշուել սկսեց:

Վանի բանակ երեք կողմէ պաշարուած էր գրեթէ. կը մնար անմիջապէս հրահանգել եւ ետք քաշել: Յունիս 18-ին ժողովուրդ արդէն գաղթած էր դէպի Ուրմի:

Թշնամին ոգետորած մեր նահանգէն սկսեց մեզ հապճեպ կերպով հետեւել: Ուրմիի դռների առջեւ մենք պարտաւորուեցինք կրկին դիմադրել թշնամիին, որն

ընդհանուր ծրագրի մը համեմատ, որն իմացանք ձեռքերնիս ընկած թրքական գրութիւններէն, Սուլտուզի կողմէն եւս սկսեր էր յառաջանալ դէպի Ուրմի: Մենք պաշարուած էինք Ուրմիի մէջ, բայց առանց յուսահատելու կոչի շարունակեցինք մինչեւ Յունիս 22 երբ թշնամին հիսսիսէն սկսաւ նահանջել:

Մեր բանակ անգիտակ թշնամու յանկարծական նահանջէն, սկսեց հետապնդել զայն: Յունիս 28-ին գրաւեց Քերիմապատ եւ հասաւ մինչեւ Կուշի, ուր տեղ երկու հայ զինուորներ բռնուելով յայտնեցին որ մեր Սալմաստ բաշուելէ մէկ օր վերջ Անդրանիկ⁶³ 5000-եռք բանակով մը Խոյի վրայ է արշաւեր եւ տաճկաց բանակը սարսափի մատներ: Այդ պատճառաւ թշնամին մեզ թողնելով աճապարեր է Անդրանիկի յառաջխաղացումը կասեցնելու: Անդրանիկ դժգոհ Երեւանեան հասարակապետութենէն թողեր էր ու մեզ միանալու նպատակով Խոյի վրայ էր յարձակեր, բայց փամփուշտի չգոյութեան պատճառաւ եւ մեր նահանջի ծայն առնելով կրկին դէպի Ջուֆա է քաշուած:

Հարափ կողմից յառաջացող բանակն եւս թողեց եւ հեռացաւ մեր սահմաններէն: Այս դրութեան մէջ անհրաժեշտ էր ուժեղ ռազմետեղ⁶⁴ մը կատարել դէպի Սալմաստ եւ աշխատել Անդրանիկի բանակի հետ յարաբերութիւն ունենալ: Այդ առթիւ աշխատանքներ կատարուեցան, բայց ասորիներ չկարենալով որոշուած ուժը հասցնել եւ ճակատ ուղարկել, այդ պատճառաւ էլ յետաձգուեց դէպի Սալմաստ կատարուելիք հետախուզութիւն: Միայն Յուլիսի 4-ին կրկին Անդրանիկի զինուորներէն Միսակ անունով մէկը եկաւ մեր բանակ եւ պատմեց որ Թիֆլիսը, Կարսը, Արտահան եւ Ալեքսանդրապոլ թիւրքեր գրաւած են, Երեւան էլ բանակցութեան մէջ էր հաշտութիւն կնքելու: Անդրանիկ դժգոհ այս քայլէն թողեր ու հեռացեր, բայց մեզի չկրնալ միանալու համար կրկին ետ քաշուեր ու Նախիջեւան գացեր է:

Այսպիսի անորոշ կացութեան մէջ էինք, երբ թշնամին կրկին հարաւն իր լքած դիրքերը վերադարձաւ: Բնական էր Անդրանիկի յառաջխաղացումը կասեցնելէն վերջ թշնամին աճապարած էր գալ եւ իր կիսատ թողուցած գործը վերջացնելու: Մենք մեր կողմէ ուժեր ուղարկել էինք Քերիմապատ պաշտպանելու, ինչպէս նաեւ Բարանտուզ-Չայ Հայտարապատէն յառաջացող թուրքերու առաջնն առնելու համար:

Այս կացութեան մէջ Յուլիս 8-ին անսպասելի կերպով Ուրմի եկաւ անգլիական օդանաւ մը, որի յանկարծական երեւում ամէն բան մոռցնել տուաւ: Ան ժողովուրդ ոգեւորութեան առաջնորդեց: Օդանաւ եկած էր Միւսնայի անգլ. բանակէն: Օդանատոր⁶⁵ շատ սեղմ ժողովի մէջ յայտնեց որ Պարսկաստանի մէջ անգլիացիներ միայն 6000 զօրք ունին. Միւսնա փոքրիկ յառաջապահ խումբ մը միայն կայ. անգլիացուց զիծն է Բիջար եւ Չէնջան⁶⁶: Ցետոյ յայտնեց որ անգլիացիք իբրեւ օգնութիւն Ուրմի պիտի հասցնեն ռազմամթերք, 20 մարզիչներ Մայօրի⁶⁷ մը եւս: Իբր մայր առաջարկեց յատուկ օր մը նշանակել, որպէսզի անոնք իրենց օգնութիւն Սայի-Կալա հասցնէին, իսկ մենք ալ մեր կողմից ասորիների հետ գնայինք եւ ստանայինք: Այդ օր որոշուեց Յուլիս 28-ին:

Այս յայտնութիւններ, որոնք շատ զաղտնի պէտք է պահուին, ի մեծ զարմանս բոլորին, հասարակութեան սեփականութիւն դարձան: Թէ ովքեր էին այդ լուրը դուրս տարածողները մեզ յայտնի չէ, որովհետեւ այդ առթիւ երբեմն ասորիներ երբեմն ռուսներ մեղադրուեցան: Միայն յայտնելով այս իրողութիւնը, կարեւոր կը համարենք ըսել, որ այդ լուրեր ժողովրդին մէջ անցնելով, վատ տպատրութիւն

թողնց[ին] ժողովրդի վրայ եւ ամէնք իմանալով անգլ. ուժերի սակաւաթիւ լինելու հանգամանքը յռահատ[ու]եցին:

Մինչ այդ Յուլիս 17-ին Քերիմապատի շրջանից մեր հետախուզող խմբեր բռնեցին թուրք սուրհանդակ մը հետեւեալ գրութեամբ, որի պատճէնը կարելու կը համարենք զետեղել հոս:

«Առ նախկին նախագահ Վանայ ի Ուրմիա

«Օսմանեան կայսրութեան եւ նոր կազմուած Հայ հասարակապետութեան մէջտեղ 11 Յունիս 1334 թուով հաշտութիւն կնքուած է: Կէսմրու քաղաքը եւ իր շրջաններու մէկ մասը ու Ուրմիա քաղաքը եւ Էջմիածին գիտաքաղաքը եւ իր շրջանակներու մէկ մասը եւ Երեւան Թուրքիոյ տրուած է, Վրաստան եւ Ատրպատական հասարակապետութիւններու եւ Հայաստանի սահմաններն որոշուած չեն: Ի մէջ Հաշտութեան Գրին գրուած խնդիրներով զբաղուող յանձնաժողովը Վանայ նախկին նախագահ[ի]ն եւ վանեցի գաղթականներու մինչեւ Երեւան գալու հրաման տրուած է: Ճամբան հասկնալու համար ալ դիմելու է պատերազմական ճակատին գտնուող թուրք հրամանատարներուն:

Ի Գէսմրի գտնուող նախագահ հայ յանձնաժողովի

Դրագովով»

Այս գրութեան ճակատը գրուած էր Ալի-Իսսան⁹⁸ փաշայի մի քանի տողանոց խմորատիպ գրութիւն, որով տաճկաց հրամանատար կը յայտարարէր հայերուն գալ սահման, զէնքեր յանձնել եւ 50 հոգիին մէկ զէնք ստանալով Երեւան կամ Վան անցնել:

Բնականաբար ինչպէս միշտ այս անգամ եւս զգուանքով պիտի ընդունուէր թուրքերու այս կերպ շինծու եւ կեղծ քաղաքականութիւնը: Այս սկիզբէն ի վեր հայեր կորզելու նպատակով ի գործ դրեր են թուրք վարիչները:

Մենք սակայն առանց կարեւորութիւն տալու, ասորիների հետ կը մտածէինք ճիշդ օրին հասնել Սային-Կալա՝ մեզ գալիք օգնութիւնը ընդունելու:

Այս նպատակը իրագործելու համար նախ պէտք էր հարաւի ճակատ գտնուող թրքական բանակը ջարդել. երկրորդ, հիւսիսային ճակատի վրայ ուժեր կեդրոնացնել, որպէսզի հարաւի ճակատի գործողութիւններ կատարելու ատեն թշնամին յանկարծ հիասթեւ մեր թիկունքը չվտանգէր դէպի Ուրմի առաջանալով:

Ասորի եւ հայ միացեալ շինուորական Մարմին որոշեց [թէ] հայեր ճակատ եւ ձախ թեւ պիտի բռնէին 1200 զինուորներով. Աղա Պետրոս 1500 զինուորներով թիկունքէն Ուշնիի⁹⁹ վրայ պիտի քայլէր աջ թեւով. իսկ Աղա Դատու 1000 հոգիով Մարգարառի եւ Թարգարառի ճակատ պիտի պահէր. իսկ Ուրմի-Սալմաստ բառալիօն[ի]⁹⁰ 200 հոգիները պիտի պահէին Քարիմապատի ճակատը:

Այս օրերին Աղա Պետրոսի ուղարկուած Ալի Իսսան փաշայից մէկ երկար նամակ ստացուեց, որի բովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն է: Նամակի մէջ տաճկաց փաշան կը գրէ Աղա Պետրոսին. «Ձեր Խալիլ փաշային⁹¹ գրուած հաշտութեան նամակը ստացուած է: Խալիլ փաշան այդ առթիւ շնորհի կ'ընէ Ձեզի Ձեր զօրքերով անցնել Ձեր երկրներ, միայն յանձնելով ոռանների թողուցած ռազմամթերքը եւ թնդանօթներ[»]:

Խօսելով տաճկաց եւ գերմանացաց յաջողութիւնների մասին Ռուսաստանի եւ Կովկասի մէջ, կը յայտնէ որ հայեր Կովկասի մէջ ապստամբեցին, քայք ջարդուեցին եւ վերջէն հաշտութիւն կնքուելով՝ Կաթուիկոսին դիմումին վրայ անոնց հասարակապետութիւն շնորհուեց 12000 ք[առակոսի] քիլոմետրի վրայ: Կովկասի մէջ կազմուած է Վրաստանի, Հայաստանի եւ անոնց ամէն (sic!- Վ.Լ.) մեծ

Անդրպէջանի հասարակապետութիւնը: Յայտնեցէք հայերին որ եթէ կը փափաքին իմ միջոցաւ կարող են գալ եւ անցնել Երեւան: Թէեւ կովկասահայեր տաճկահայերին այս բոլոր դժբախտութեանց պատճառ կը համարէն, բայց եթէ կամեցուի եւ զանոնք իրենց երկիրներ դրկելու շնորհ յանձն կ'առնեն: Անգլիացիները մասին կ'աւելցնէ որ անոնք մի խումբ – թիր ատւի⁹² – զօրքով եկած էին Միսանա, բայց մեր յառաջապահներ զանոնք ըջեցին մինչեւ Ղազուին, որ ենթարկուելով Քիչիկի հասնի յարձակման, փախան մինչեւ Համատան:

Խօսելով Անդրանիկի մասին, կը գրէ որ թէեւ նա սկզբին ճերմակ դրօշակ բարձրացնելով Ջուֆայէն անցաւ եւ մեր թիկունք ուզեց վտանգել, բայց շնորհիւ մեր զինուորների դիմադրութեան պարտուեց եւ երեք տեղէ ալ վիրատու Նախիջեւան անցաւ, ուր սկսած է մահմետականների կոտորել: Գալով Սալմաստի կոհներուն, եւ թէեւ իմ զօրք շարժման մէջ չէի դրեր, բայց երրորդ օր երբ իմ բանակ գործողութիւններին մասնակցեց, հայերի Անդրանիկի միանալու խնդիրը ջուր ինկաւ եւ մենք յաղթեցինք: Այն Ռուսական սպաներ որոնք եկան եւ Կովկաս կ'ուզէին անցնիլ, իմ ձեռք անցան, որոնց քննելէ վերջ կրկին ետ դրկեցի, իսկ նաւով Շարաբխանէ հետախուզութեան եկող խումբը մեր ձեռք գերի իյնալով՝ զանոնք դրկեցի Վանի եւ Դիարբէքրի մէջտեղ ճամբաների վրայ աշխատցնելու: Կ'աւելցնէ այս բոլորէ վերջ յանուն ձեր երախաներուն եւ ձերերու թափուելիք արեան, եթէ անձնատուր լինէք՝ մեր բարեխնամ կառավարութիւն ձեզ պիտի շնորհէ ազատութիւն եւ հանգիստ. հակառակ պարագային պատասխանատուութիւնը ձեզ վրայ կը մնայ:

Նոյն ատեններ Մուսուլի Ատրի պատրիարք ասորիներին ուղղուած նամակով մը կը յայտնէր որ ինք Խալիլ փաշայի հետ խօսած է եւ կը խնդրէ որ անձնատուր լինեն, քանի որ օսմ. կայսրութիւն դարերէ ի վեր մեզի բարեկամ է եւ աս բոլորի համար շնորհ կ'ընէ եթէ անձնատուր լինէք:

Սոյն նամակներին եւ ոչ մի հաւատք չընծայելով, Յուլիսի 23-ին մեր յարձակումը սկսեց: Միայն Աղա Պետրոսը իր խոստացած ուժը կրկին չկրցաւ ճակատ թերել, 1500-ի փոխարէն 3-400 հոգի միայն մասնակցեցան գործողութեան: Բայց որովհետեւ հարաւի թշնամին այնքան ուժեղ չէր, չորս օրոքայ յամառ կոհներէ վերջ յաջողուեց թշնամուն փախցնել, որով եւ ճամբան բանալ դէպի Սային-Կալա: Յուլիս 28-ին հարաւի ճակատի մեր երեք թեւեր Նակատինի մէջ միացան եւ աճապարեցին Սային-Կալա, այդ շրջան թողնելով Վանի բանակից հետեակ մտաւ: Հայերէ եւ ասորիներէ բաղկացեալ այս խումբը Սային-Կալա կը հասնի, բայց քանի որ անգլիացիք ճիշդ օրին եկեր եւ մեզ հոն չգտած վերադարձեր էին, մի օրոքայ ճամբայ եւ կը յառաջանան եւ կը հանդիպին անգլ. զօրքին: Հոն կը պատրաստուին կրկին վերադառնալ, եւ երբ Օգոստ. 4-ին անգլիացիների հետ խումբը Սային-Կալա կը հասնի, հոն այլեւս կը գտնէ Ուրմից նահանջող ազգաբնակչութիւնը, որով եւ այլեւս չեն շարունակի յառաջանալ:

Երբ հարաւի ճակատի մեր գործողութիւնները կը յառաջանային, թշնամին հիախի ճակատէն սկսաւ յարձակիլ, եւ որովհետեւ Աղա Դաւութ խոստացած իր 1000 զինուոր չէր կրցած ժամանակին ճակատ հասցնել, թշնամին Մարգաառուն եւ Թաղաառուն⁹³ ճակատ բաց գտնելով ուղղակի Ուրմից վրայ յարձակեց, միեւնոյն ատեն պաշարելով Քարիմապատ գտնուող հայկական բաւոյթիւնին, որմէ միայն 60-65 հոգի ազատեցան, մնացածները սպաննուեցին կամ գերի տարուեցին:

Իսկ ժողովուրդը յանկարծակիի գալով թշնամիի յառաջխաղացման ատեն առանց պաշտօնապես հրահանգի սպասելու սկսաւ նահանջել եւ ինչպէս վերը շեշտուցի, Օգ. 4-ին Սային-Կալա հասաւ:

Խուճապով կատարուած այս նահանջը հայերէ եւ ասորիներէ բնական մահեր խլեց: Թշնամին թիկունքէն մեզ հարուածելով Սօլտուզի մէջ ուզեց մեր ճամբան փակել: Այդ առթիւ Մարաղայէն հեծելագորաց խումբ մը եկած էր, որին յաջողուեց Սօլտուզի տեղական ժողովրդի հետ միացած յարձակել մեր ժողովրդի վրայ եւ բաւական գերի տանել, եւ վերջ իմացանք բոլորն էլ կոտորուել էին:

Հայ զինուորների խումբ մը միշտ յետսապահ մնալով ամեն օր կռուի հանդիպած էր եւ յաճախ լուրջ ընդհարումներ ունեցած աազակային խմբերի հետ ինչպէս եւ տաճկաց զօրքին:

Սային-Կալա հասնելով, մենք այլեւս փրկուած կը համարէինք մեզ. սակայն Օգոստ. 6-ին թշնամին թիկունքէն կրկին երեւաց եւ Սային-Կալայէն կէս ժամ հեռու գիտաբաղաքի մը մօտ մենք կրկին գործ ունեցանք տաճկաց հեծելագորաց հետ: Հոն եւս թշնամիի ձեռք ժողովրդի մի մասը անցաւ: Մի օր կռիւներէն վերջ մասնատրապէս Վանի ժողովուրդի եւ բանակի համար ծանր զոհեր ունեցանք կորցնելով նաեւ նահանգապետ պ. Կ. Համբարձումեանը: Մեզ կը մնար այլեւս ճամբան բռնել դէպի Համատան, քանի որ Բիջար հասնելէ յետոյ Օգոստ. 11-ին անգլ. զինուորական իշխանութիւն եւս հրահանգեց ուղղակի յառաջանալ դէպի Համատան, ուր դիրութիւններ պիտի տրուէին յոգնած, ուժասպառ եւ անօթի ժողովրդին:

Օգոստ. 15-ին Պըհար⁹⁴ հասանք ուրտեղից յառաջ անցնել արգելուած էր: Հոն անգլ. իշխանութիւն սկսեց զէնքեր հաաքել եւ ժողովուրդին կենտրոնացնել Բաղդադի ճամբի վրայ եղող Թազագանդ անբնակ գիւղը: Անկէ առաջ Համատան հասած 2000 հայ գաղթականներ ուղարկուած էին՝ դէպի Սուլթանապատ, ուր մի քանի հայ գիւղեր կային, բայց վերջէն այդ կարգադրութիւն փոխուեց երբ այլեւս որոշուեց ժողովուրդ ուղարկել Բաղդադի շրջան:

Մեր զօրք բացի հրամանատար պ. Լեւոնի⁹⁵ հետ եղողներէն մնացածներ բոլորն ալ կազմալուծուած էին գաղթի ընթացքին: Պըհար անցնելով երբ զէնքեր հաաքուեցան, այլեւս դիւրին չէր հաաքել զանոնք:

Օգոստ. 17-ին անգլ. զին[ուորական] իշխանութիւն յայտնեց հրամանատար պ. Լեւոնի որ Ազգ. Մարմնի հետ համաձայնութեան են եկած որ 18-48 տարեկաններ պէտք է զինուորագրուեն եւ կազմեն հայկական զօրք: Թէեւ ոչ մէկ դիրութիւն չտրուեցաւ Ազգ. Մարմնի հետ յարաբերելու, բայց տրուած հրամանը գործադրելու համար անմիջապէս ձեռնարկուեցաւ բանակի վերակազմութեան: Յայտարարութեամբ մը զինուորներ Արշինա⁹⁶ կանչուեցան, ուր լինելու էր հայ եւ ասորի զօրքերի կենտրոնատեղին: Կարճ ատենի մէջ յաջողուեց Վանի բանակի թիւը հասցնել 900-ի: Ասորական եւ հայկական ուժերի հրամանատար նշանակուած էր Ժօլօնէ Մըքարդըն, որն իրեն օգնականներ նշանակեց հայերից պ. Լեւոն եւ ասորիների կողմէ Աղա Պետրոս: Մեր զօրք կենտրոնանալով սկսաւ անգլ. մարգիչներու ձեռքի տակ զինուորական կրթութիւն ստանալ:

Բանակի վերակազմութեամբ միայն բաւականանալ չէր լինի: Ժողովրդական գործը վարելու համար Վանի, Սալմաստի, Ուրմիոյ եւ Համատանի կոմիտէներ ի մի եկան եւ կազմելով միացեալ կոմիտէ մը գործի սկսան: Անիրաժեշտ էր այս առթիւ Թեհրանի կոմիտէի հետ յարաբերութեան մտնել: Մինչ այդ ատեն գաղթականութեան Համատան հասնելու լուրը Թեհրան ստացած էր եւ

կարգադրած էր որ Ազգ. Մարմնի անդամներէն պ. տօք. Ստեփանեանը Համատան գայ եւ մօտիկէն ծանօթանայ գաղթականութեան կարիքներուն:

Գաղթականութիւն արդէն դէպի Բաղդադ էր ուղարկուած պարբերաբար. միս կողմէ սակայն հիւանդներուն եւ որբերին պէտք էր հոգ տանել:

Տօք. Ստեփանեան Համատան եկաւ: Անոր միջոցով այլեւ Թեհրանի հետ յարաբերիլ դիւրին լինելով, անմիջապէս ձեռնարկուեցաւ որբերու հաւաքման եւ կարճատեւի մէջ հաւաքուեցան 400-ի մօտ որբեր, որոնք փոխադրուեցին Շուաիին⁹⁷ գիւղ, ուրտեղ հնարաւոր միջոցներով զանոնք խնամելու եւ հիւանդներ բժշկելու:

Սեպ. 22-ին մեր բանակ ուղարկուեց Սինէ՝ հոն ճակատը պահպանելու: Միս կողմէ Ուրմի-Սալմաստ բաթալիօնը, որը կրկին Համատանի մէջ կազմակերպուած էր, թուով 300 հոգի, ուղարկուեց Բիջար:

Բանակ ճակատ ուղարկելէն վերջ, մնացած հիւանդ զինուորներ Համատան հաւաքուեցան եւ առանձին հիւանդանոցի մը մէջ խնամքը սկսաւ:

Նոյ. 12-ին երբ կարգադրուեց որ ճակատի մեր զինուորներ փոխադրուեն դէպի Բաղդադի շրջան, բանակի շտապ, որ կը գտնուէր Համատան, ճամբայ ելաւ եւ Նոյ. 22-ին հասանք Բաքուքա, ուր տեղադրուած էր նաեւ ժողովուրդը:

Ներկայիս Բաքուքայի մէջ մեր զօրքի թիւը կը հասնի 820-ի:

Ուրմի եւ Սալմաստ բաթալիօն լուծուած է ասորիների մէջ: Մեր բանակն ալ ասորական անունով հայկական մաս կը համարուի: Ժողովրդի թիւ 15,000-ի կը հասնի հաշուելով Ուրմի[այի բնակիչները] եւ Սալմաստցիներն էլ: Կայ գաղթականութեան ներքին գործերի համար նշանակուած կոմիտէ մը, նաեւ առաջնորդարան մը առաջնորդութեամբ Վահրամ ծայր. վարդապետ. Կանաչեանի:

Վերջացնելէ առաջ տղն տեղեկագիր, կարելու կը համարենք յիշատակել հետեւեալը... Նկատի ունենալով որ Վանի նահանգապետը սպանուած է, նաեւ Վանի իշխանութեան անդամներուն մեծ մասը՝ ոմանք Կովկաս, ոմանք Պարսկաստանի այլ մասերու մէջ կը գտնուին, հետեւաբար այս տեղեկագիր լրիւ, ամբողջական չի կարելի համարել. այդ առթիւ կրնայ թերութիւններ ունենալ: Բայց այսքան իբր կատարուած իրողութիւն պաշտօնական համարել անհրաժեշտ կը համարենք եւ այդ առթիւ կը ստորագրենք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Դիպլոմատական յայտնաբերումը կը կատարուէր Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիոթի Ուսումնասիրութեան Կեդրոնի տնօրէն եւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տազեւեանի հետ փոխանակեալ է-նամակի մը կցեալ նիւթ մը, որ կը վերաբերէր Դոկտ. Ուրբէն Օ. Սահակեանի Հանդէսին ԼԹ. հատորով (էջ 207-24) հրապարակուած մէկ ուսումնասիրութեան: Սահակեան հոն յիշատակած էր խնդրոյ առարկայ փաստաթուղթերը, նշելով թէ պատճէնը տրամադրուած է պատմաբան Միհրան Մինասեան: Հետեւաբար, դիմելով ՀՀ ԳԱԱ Հայոց Յեղափոխութեան Թանգարան-Հիմնարկի յուշագրութիւններու եւ վաւերագրերու բաժնի վարիչ պատմաբանատէր Մինասեանի, կը տեղեկանայինք թէ բնագիրն ամբողջութեամբ հրատարակուած էր արդէն *Բանբեր Հայաստանի Արխիւներ*ի

- գիտական ժողովածուին 126րդ համարին մէջ (Երեւան, 2018, էջ 52-90), եւ շնորհակալութեամբ կը ստանայինք պատճենը մեր լուսանկարներէն բացակայող էջին, որով եւ հնարաւոր կ'ըլլար ամբողջացնել մեր պատրաստած նիւթը:
- ² Օրինակ, յարաբերաբար ծաւալուն յուշագրութիւն մըն է Սահակ Տէր Թովմասեանի «Մեծ Աղետը (Յիշատակարանս՝ Վան-Պարսկաստան-Կովկաս)» խորագրեալ նիւթը, որ որոշ ընդմիջումներով լոյս տեսած է Հ. Յ. Դաշնակցութեան երկրի Կեդրոնական Կոմիտէի շաբաթը երեք անգամ լոյս տեսնող *Աշխարհք* պաշտօնաթերթին մէջ, 10 Ապրիլ 1919ի համարէն սկսեալ:
- ³ Գրուած 1919ին, Պաղտատ, ուր հեղինակը հանգրուանած էր նահանջող վանեցիներու հետ:
- ⁴ Այս բաժինը, Յակոբ Փափագեանի եւ Հայկազ Պօղոսեանի խմբագրումով (որոշ ուղղումներով ու ծանօթագրութեան մը յաւելումով), հրատարակուած է *Վան-Վասպուրականի Հերոսամարտը – 75 ժողովածուին* մէջ, Երեւան, 1990, էջ 115–26:
- ⁵ Այս ժողովածուն կը պարունակէ նաեւ «Տարագիր Վասպուրական 1915–1918» խորագիրն ու «Վասպուրականը Կովկասի Մէջ» ենթախորագիրը կրող բաժին մը, որ 86–111 էջերը գրանելով անմիջապէս կը նախորդէ «Վանայ Անկախ Կառավարութիւնը» հատուածին, բայց բովանդակութեան ցանկին մէջ կը յիշատակուի առանց հեղինակի անուան: Այդ անանուն հատուածն ալ որոշապէս կը պատկանի ժամանակաւոր կառավարութեան երկրագործական գործերու տեսուչ Արմենակ Մաքսապետեանի գրչին եւ անոր անբաժան մաս կը կազմէ «Վասպուրականի Իշխանութիւնը» հատուածը:
- ⁶ Տեղեկագիր՝ պատրաստուած 1919ին Երեւան, ՀՅԴ իններորդ Ընդհանուր Ժողովին (27 Սեպտեմբեր–30 Հոկտեմբեր, 1919) ներկայացուելու համար, ինչպէս նշուած է Վէմի խմբագրական ծանօթութեան մէջ: Հմայեալ Մանուկեան կը գբաղենքներ ներքին գործերու տեսուչի պաշտօնը ժամանակաւոր կառավարութեան կազմին մէջ:
- ⁷ Արսէն Հացագործեան (1882–1983) իր յուշերուն մէջ կը նշէ թէ ինք Երեւանի Գայանեան եւ Խրիմեան դպրոցներու արեւմտահայ բաժիններու ամառ ուսուցչի պաշտօնը կը վարէր, երբ Երեւանի Արեւմտահայ Խորհուրդը 1917ի Դեկտեմբերին կ'որոշէ զինք ուղարկել Վան՝ Վասպուրականի մէջ նոր ուժեր պատրաստելու կարիքը նկատի ունենալով: Տեղին կը գտնենք այստեղ նշել հետեւեալը: Վահան Թէրեւեանի խմբագրապետութեամբ Աղեքսանդրիայ շաբաթը երեք անգամ լոյս տեսնող *Արեւ* լրագրի 25 Նոյեմբեր 1918ի 85րդ (550) համարին մէջ կը գտնուի «Վանի Վերջին Նահանջը» խորագրով գրութիւն մը, որ շարունակուած է յաջորդ քանի մը համարներուն մէջ: Խմբագրական նշումով կը տեղեկացուի թէ Պաղտատի առաջնորդ Մուշեղ Արք. Սերոբեան «Հայ Ազգ. Միութեան քարտուղարութեան միջոցաւ» թերթին յոված է հրատարակուող տեղեկագիրը: Իսկ Մուշեղ սրբազան, իր հերթին, կը նշէ թէ 17 Սեպտեմբերին Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի եւ Եգիպտոսի Հայ Ազգային Միութեան արդէն ներկայացուցած էր «Վանի վերջին նահանջին եղբրական ու հերոսական դրոագները, քաղելով բերանացի կցկտոր տեղեկութիւններէ»: Ապա կ'աւելցնէ. «Այս անգամ այդ դրոագները կը ներկայացնեն հանրային ուշադրութեան ... աւելի մանրամասնութեամբ, ու թուականներով ճշգրտութեամբ, քաղելով զանոնք վանեցի Պ. Եղիշէ Կարդանեանի օրագրութենէն, եւ Պ. Արսէն Հացագործեանի դիւրողագրերէն»: Պոնիւն հրատարակուող Հայրենիք ամսագրի

Դ. տարրան 10րդ (46) համարով (Օգոստոս 1926), կը գտնենք «Վրաններու Տակ (էջեր Տարագրութեան Օրերէն» խորագրեալ յուշագրութիւն մը, որուն որպէս հեղինակ ներկայացած է Թոշիկի գրչանունով անձ մը: Այդ օրերուն Պաքուպայի վրանաքաղաքը գտնուող հեղինակը ի՞նչ կը պատմէ՝ իր մէկ գրոյցը Մուշեղ սրբազանի հետ, անկէ խնդրելով գաղթականները իսկոյն Պաղտատ փոխադրել. եւ կ'ըսէ. «Սրբազանը կը խոստանայ միջնորդութիւն յարուցել միայն ուսուցիչներու եւ քանի մը արհեստարտերնրու համար...» (էջ 61): Իսկ Հայրենիքի յաջորդ՝ Սեպտեմբեր 1926ի համարով (Դ. տարի, թիւ 11 (47)) շարունակուող յուշագրութեան մէջ ընդգծել է ետք թէ Սերոբեան կը փախաբեր «նահանջի տեղեկագրին փութացումը», ծանօթագրութեամբ մը կը նշէ. «Պաղտատ հասնելէն յետոյ, ընկերս քեղեկագիրը կազմեց, քուաւ Եպիսկոպոսին, որը փութաց իր սեփական ստորագրութեամբ ղրկել Եգիպտոսի «Արեւիկն՝ ուր եւ հրապարակուեցաւ» (էջ 125): Թէեւ «ընկերս տեղեկագիրը կազմեց» արտայայտութիւնը կրնայ ենթադրել տալ թէ Արսէն Հացագործեանը կրնայ ըլլալ այդ ընկերը եւ, հետեալաբար, հեղինակէն տարբեր անձ, քայց իրողութիւնն այն է թէ Թոշիկիը Նոյնիքն Հացագործեանն է, որ այդ գրչանունով մինչ այդ աշխատակցած էր զանազան թերթերու (Բախտիար Մ. Յովակիմեան, Հայոց Ծածկանունների Բառարան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., Երեւան, 2005, էջ 175): Այս հաստատումին կը զօրակցի նաեւ Պաքուպայի գաղթականներուն նկատմամբ ազգային մարմիններու եւ Սերոբեան սրբազանի վերաբերումին արժեւորման ընդհանուր ոգին, որ կը դրսեւորուի Հացագործեանի «Պարուպայի Հայ Փախստականները» յօդուածին մէջ (Կիլիկիա օրաթերթ, Ատանա, 8 Յունիս 1919, թիւ 51 եւ 14 Յունիս 1919, թիւ 56): Հացագործեանի անուն կը հանդիպինք իբրեւ վաստակաւոր դասատու եւ Հայաստանի «Վասպուրական» Հայրենակցական Միութեան հիմնադիրներէն մին Յեղափոխութեան յիսնամեակի նախօրեակին՝ 1964ին, Անտոն Քոչինեանի ուղղումը նամակին մէջ, ուր կը խնդրուի Նոր-Վան կամ Նոր-Վասպուրական կոչել Սեանայ Լիճի արեւելեան ափին կառուցուելիք արդիւնաբերական քաղաքը (Վարագրատ Յարութիւնեան, «Հայրենիքն Անմոռաց է», Պաղտատնասիրական Հանդէս, 2007:1, էջ 274-76): Չենք տեսած իր Իմ Կեանքի Պաղտութիւնը ինքնակենսագրական յուշերը (Երեւան, 1957) եւ Գոյաբերում գործը (Երեւան, 1978):

⁸ Սարիաղեան ժամանակաւոր կառավարութեան զինուորական գործերու տեսուչ Պովկարացի Գրիգորի քաջալերանքով պահ մը կը վարէ զինուորական պահեստապետի պաշտօնը, յաջորդելով Յովհաննէս Թումանեանի որդիին՝ Արտաւազդի, որ 1918ի Նոյնեմբերին որպէս վերջնապահ իր կեանքը վրայ պիտի տար նահանջող վասպուրականցիներու կեանքը ապահովելու համար:

⁹ Անտիո Յարութիւնեան այլապէս լաւ պրպտուած եւ խնամուած իր յօդուածին մէջ հաւանաբար մեքենագրական հետազոտութեան հետեանքով Թէոդիկի վերոնշեալ գրութեան համար իբրեւ աղբիւր յիշատակած է Ամէնուն Տարեցոյցի Ժ.-ԺԴ. տարիներու միացեալ համարի (1920) 109րդ եւ յաջորդող էջերը, մինչդեռ այդ տեղեկութիւնները ամփոփուած են տարեցոյցին ԺԵ. տարրուան (1921) համարի համապատասխան էջերուն մէջ:

¹⁰ Վարդանեան, էջ 4-6: Իդէպ, գիրքին մէջ բանաստեղծուիկ Սիլվա Կապուտիկեանի հօր մականունը տպագրական սխալի հետեանքով դարձած է Կապուցիկեան: Հոն Սարիաղեանի անուն կը հանդիպինք Սէրիաղեան տարբերակով:

¹¹ Թէոդիկ, 109-113:

¹² Մաքսապետեան իր վերոյիշեալ գրութեան մէջ կ'ըսէ. «... երկար վիճաբանութեան նիւթ եղան մեր իրաւաստութեանց եւ անուանումի հարցերը: Ի վերջոյ յարմարագոյն եղաւ կոչել «Վարիչ» փոխանակ «Տեսուչ» կամ «Նախարար» անուններ կրելու...» (Վասպուրական, էջ 106):

¹³ «Տեղեկագիր Վանի Հայկական ժամանակատր Կառավարութեան 1917 Դեկ. 1 – 1918 Դեկ. 1 Վանից-Քաղդաղ» խորագրեալ տեղեկագիր մը չէր կրնար գրուած ըլլալ Համաւտան 1918ի Սեպտեմբերին..., բայց գրուած կրնայ ըլլալ Պաղտատ 1918ի Դեկտեմբերին:

¹⁴ Վասպուրական, էջ 106: Իդէպ, Մաքսապետեանի գրութեան թուական ներկայացուած է 1919ի Նոյեմբերը Վասպուրական ժողովածուին մէջ (էջ 112): Կը խորհինք թէ գրաշարական սխալ մը թոյլ տրուած է: Թուականը պէտք է ըլլայ 1929, մանաւանդ երբ նկատի ունենանք թէ վերը մէջբերեալ ծանօթագրութեան մէջ կը վկայակոչուի տասներկու տարիներու անցքը՝ Վասպուրականի իշխանութեան անցքերը գրաւելու առաջին ճիգէն ետք:

¹⁵ Զաւէն պատրիարք Տէր-Եղիայեան, որ օսմանեան իշխանութիւններու կողմէ աքսորուած էր Իրաքի Մուսուլ քաղաքը, 30 Դեկտեմբեր 1918ին հոնկէ մեկնելով Պաղտատ հասած էր 1 Յունուար 1919ին՝ հոնկէ Պոլիս իր պատրիարքական այթողը վերադառնալու համար: Պաղտատ գտնուած շրջանին, Պաքուպա հանգրուանած հայ զինուորներու հարցով զբաղելու նպատակով Զաւէն պատրիարք Պաքուպա գացած էր 5 Յունուարին եւ Պաղտատէն հեռացած 9 Յունուարին (Զաւէն Արքեպս., Պաքոյիարքական Յուշերս – Վանքագիրներ եւ Վկայութիւններ, Հրատ. թիւ 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, Գահիրէ, 1947, էջ 259–67): Կը հետեւի թէ Մաքսապետեանի տեղեկագիրը պատրաստուած եւ Զաւէն պատրիարքի յանձնուած էր 9 Յունուար 1919էն առաջ:

¹⁶ Զաւէն Արքեպս., էջ 302:

¹⁷ Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, ԺԵ. Տարի, 1921*, էջ 107–30:

¹⁸ «Գրուած Տաճկահայաստան»ը հարկ է հասկնալ որպէս ռուսերու կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստան:

¹⁹ 1913–14ի դրութեամբ, առաւելաբար Վանի եւ Աղթամարի թեմական դիւանաթոյթներէն քաղուած վիճակագրական տուեալներու համաձայն, Վան քաղաքն իր արուարձաններով կը բովանդակէր 30,084 հայ, Արճակ-Թիմար՝ 15,411, Բերկրի՝ 5152, Արճէ-Ալջաւազ՝ 16,202, Հայոց-Ձոր՝ 6913, Սարայ՝ 826, Բաշգալէ (Աղբակ)՝ 3505 (Ա.Դո. Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914–1915 Թուականներին, Լոյս տպարան, Երեւան, 1917, էջ 30): Կը նշանակէ թէ Վանի վերջին նահանգի նախօրեակին կատարուած մարդահամարին համաձայն, նկատի ունենալով միայն վերը թուարկուած գաւառները կամ շրջանները, անոնց հայ բնակչութիւնը նուազած էր երկու երրորդով:

²⁰ Այս պէտք է ըլլայ արդիւնքը այն վիճակագրութեան, որուն յղում կատարած է Հմայեակ Մանուկեան իր յուշերուն մէջ, ըսելով թէ 1917ի Դեկտեմբեր 1ին Շրջանային Վարչութիւնը կազմած է վիճակագրական Բիւրօ մը բաղկացած Զաւէն Կորկուտեանէ, Իրմէ, Անտիա Թերզիպաշեանէ, Սամուէլ Մեարուպեանի եւ Միքայէլ Տէր Միքայէլեանէ (Մանուկեան, Վէմ, ԺԹ. համար, Փարիզ, 1937, էջ 73):

²¹ ՀՅԴ անդամ Կոստի, Կոստիա կամ Կոստանդին Համբարձումեան (1882–1918) մասնակցած է Առաջին Աշխարհամարտի շրջանի կամավորական շարժման եւ մասնակից դարձած Արամ Մանուկեանի զխաւորած Վանի առաջին ժամանակատր իշխանութեան՝ 1915իմ7Ժամանակակիցներու վկայութեամբ՝ ան

վայելած է լայն ժողովրդականություն եւ, իր գաղափարակիցներու կողքին, յարգանքը նաեւ ոչ-դաշնակցական շրջանակներու:

²² Այլով՝ Ընդհանուր Կոմիսար եւ Նախագահ Կոմիսարներու հսրհոփոփի (Վարդանեան, էջ 17):

²³ Մաքսապետեան,- որ կազմէն դուրս ձգելով նահանգապետի օգնականն ու Զաւարեանը կը թուարկէ սկզբնական եօթ անուն իբրեւ անդամ կառավարութեան, որուն «բաժինները յետոյ փոփոխութեան ենթարկուեցան», կ'անցնէ թէ ժամանակաւոր կառավարութեան կամ իշխանութեան «կը մասնակցէին երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներն ալ, առանց պաշտօնի», ու կ'ըսէ. «Կը յիշեմ ... Կովկասէն եկած Հայրապետ Յովհաննիսեան եւ Զաւրիի/ի/եւ մը, որոնցմէ առաջինը նախագահի օգնական նշանակուեցաւ, իսկ երկրորդը փոսպ-հաղորդակցութեան վարիչ» (Վասպուրական, էջ 106): Սարիաղեան, որ նահանգապետի օգնականի անուն չի տար, կը գրէ. «Սկզբում այդ մարմինը 7 հոգուց էր կազմուած, բայց մի երկու-երեք ամիս յետոյ, ինչքան յիշում եմ, բարձրացաւ 10-ի,- ապա կ'անցնէ.- ...Վարչական մարմնի գործունեութիւնը այդ ժամանակներում ենթակայ էր Վանում գոյութիւն ունեցող կուսակցութիւնների (Դաշնակցական եւ Ռամկավար) լիազօր երկու ներկայացուցիչների վերահսկողութեան, որոնք մասնակցում էին վարչական մարմնի ժողովներին եւ խորհուրդներ ու թելադրանքներ տալիս» (Սարիաղեան, էջ 156-57): Վարդանեան կը գրէ. «Շրջանային վարչութիւն[ը] ... կ'որոշէ ... նախարարական խորհուրդի նման մի խորհուրդ ստեղծել՝ կոմիսարներ անունով», որուն կազմը ժողովուրդին կը յայտնուի 24 Յունուար 1918ին պատերու փակցուած յայտարարութեամբ. եւ այդ կազմին մէջ խնամատարական կոմիսար կը նկատէ Հայրապետ Յովհաննէսեանը (Վարդանեան, էջ 16-17): Մեզի կը թուի թէ կառավարութեան կազմը սկիզբէն իսկ ընդգրկած է ներկայացուող ցանկին մէջ յիշատակուած տեսուչ-վարիչ-կոմիսարները, որոնց թիւն էր ինն եւ ոչ թէ տաս: Ուրիշ աղբիթ կը մնայ լուծել հանելուքը նահանգապետի օգնականի անունն, որ Մաքսապետեան երկու տարբեր գոյութիւններու մէջ կը ներկայացնէ երկու հակասական ձեւերով, նախ՝ Յովհաննէս Հայրապետեան, ապա՝ տասներկու տարի անց՝ Հայրապետ Յովհաննէսեան: Յիշողութեան վրէժ պարզեօք: Կը թուի թէ Հայրապետ Յովհաննէսեան անունը Մաքսապետեանի կամ Վարդանեանի արձանագրութիւններուն միջոցով սողոսկած է յետագայ շարադրանքներու մէջ (ինչպէս, օրինակ՝ Աւ. Յարութիւնեան, էջ 42. Նաեւ՝ Ռ. Սահակեան, էջ 38):

²⁴ Պէտք է կարդալ Գրիգոր Կեօզեան կամ Կեզեան (Պուլկարացի Գրիգոր), Վանի 1915 Ապրիլի հերոսամարտի ղեկավարներէն, որ մահացած է Պոլիս 1922ին եւ արժանացած փառաւոր յուղարկւորութեան մը Սկիւտարի մէջ (Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, 1923, ԺԷ. Տարի, էջ 415): Թէոդիկ կը գրէ թէ այս անու, արիւնատու ատաղձագործ եւ կանտիլէն լեղափոխական գործունէութեան լծուած հերոսը 1908ին իր գաղափարի ընկերներէն Դատլի մատնութեամբ ձերբակալուած է Վանի մէջ «մէկ միլիոն փամփուշտի գրամման արտէն, ծայրայեղ խոշորանգումներու ենթարկուելով բանտին մէջ», իսկ վանեցիներու «Պարմական նահանջին, իրեն եւս վիճակուեցաւ ահատոր խաչակրութիւն մը որ հին ժամանակներու «Նահանջ Քիւրուս»ն գլեց անցաւ» (Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, ԺԶ. Տարի, 1922, էջ 362-63): Մեր ներածականին մէջ նշուած Մաքսապետեանի ծանօթագրութիւնը ակնարկութիւն կ'ընէ «օրինակ»ներու: Կը տարուի՞նք մտածելու թէ Կեօզեան-Գեորգեան շփոթը կրնայ հետեանք ըլլալ սխալ արտագրումի:

²⁵ ՀՅԴի անդամ Հմայեակ Մանուկեան (1888–1920), որ ինչպես մեր ներածականին մեջ յիշատակում էր իբրեւ յուշագիրներէն մին Վանի երկրորդ ժամանակաւոր կառավարութեան եւ վերջին նահանջին, նախապէս մասնակցութիւն թերած էր Վանի 1915ի ինքնապաշտպանական կռիւներուն, միաժամանակ շարունակելով *Աշխատանք* շաբաթաթերթի հրատարակիչ-խմբագիրի դերը, զոր սկսած էր կատարել 1913ի Նոյեմբերէն: Իդէպ, շաբաթաթերթին 1913ի համարներուն մէջ ներկայացած է Հմայեակ Մ. Խորոզեան անունով՝ որպէս տնօրէն խմբագիր յաջորդելով Իշխանի (Նիկոլ Պօղոսեան, Միքայէեան [1883-1915]), նախքան Հմայեակ Մանուկեան անունով ներկայանալը: Վանի նահանջի շրջանին Երեւան անցնելով, ընտրուեց է խորհրդարանի անդամ եւ վերամիացեալ *Աշխատանք* թերթին՝ զայն վարելու իբրեւ պատասխանատու խմբագիր:

²⁶ ՀՅԴ անդամ Արմենակ Մաքսապետեան (1887–1957) 1911ին խմբագրել է ետք *Աշխատանք* շաբաթաթերթը, 1912-1915 տարիներուն հետեւեալ է Նանսի, Ֆրանսա, գիտատնտեսական համալսարանի դասընթացքին, նախքան Վան վերադառնալը՝ կրկին մասնակցութիւն թերելու նոյն թերթին խմբագրական աշխատանքներուն: 1919ին վարած է Հայաստանի խորհրդարանի առաջին քարտուղարի, ապա նաեւ ներքին գործերու օգնականի պաշտօնները: Իր «Վանի Նահանգային Կոմիսարիատի Գործունէութեան Պատմութիւնից (1917–1918թթ.) յօդուածին մէջ (*Բանբեր Հայաստանի Արխիւների*, համար 126, Երեւան, 2018, էջ 85) Սահակեան կը նշէ թէ 1921ին Պարսկաստան ապաստանած Մաքսապետեան 1922ին վերադարձած է Հայաստան, ծառայած է Ամերկոմի մէջ եւ գնդակահարուած է 1937ին: 31 Օգոստոս 2013ին Թեհրանի *Ալիք* օրաթերթին հրատարակած «Յիշատակ – Արմենակ Մաքսապետեան (1887–1957)» յօդուածով կը նշուի թէ Մաքսապետեան Պարսկաստանի Արաք քաղաքը հաստատուելով լծուած է կրթական գործունէութեան եւ թէ 1957ին իր մահկանացուն կնքած մշակութային գործիչը ետին ձգած է ձեռագիր աշխատութիւններ, որոնց մէջ մին «Վասպուրականը՝ Փետրուարի Յեղափոխութեան Մէջ» խորագրով ([https://alikonline.ir/news/social/item/508-](https://alikonline.ir/news/social/item/508- յիշատակ-արմենակ-մաքսապետեան-1887-1957) յիշատակ-արմենակ-մաքսապետեան-1887-1957 (28 Նոյեմբեր 2019-ի դրութեամբ)):

²⁷ ՀՅԴ անդամ Սամուէլ Մեսրոպեան (ծնած Շատախ 1887 կամ 1888ին՝ [Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Հայ Մամուլի Մարտնչագիտական Գործեր*, խմբագիր՝ Կ. Յովհաննէսեան, Համագրայինի «Վահէ Աթեան», տպարան, Ղլկոր, 2014, էջ 607]) 1915ին Վանի հերոսամարտի նախօրեակին խումբ մը գործակիցներով ստեղծեց էր Շատախի Ինքնապաշտպանութեան Հինուորական Մարմինը եւ Արամ Մանուկեանի նահանգապետութեան օրով նշանակուեալ էր Շատախի գաւառապետ: Վանի երկրորդ ժամանակաւոր կառավարութեան ելեմտական տեսչի հանգամանքով ստորագրեց է ներկայ քնադրին ելեմտական բաժնին մէջ նշուած փոխգիրքը:

²⁸ ՀՅԴի անդամ Զակէն Կորկուտեանի անուան կը հանդիպինք իբրեւ Երեւան հաստատուած արեւմտահայ փախստականները ներկայացնող ութ պատգամատրներէն մին՝ 4 Փետրուար 1919ին բացուած Արեւմտահայ երկրորդ Համագումարի ընթացքին (Ամատունի Վիրաբեան [պատասխանատու խմբագիր], *Համահայկական Խորհրդակցութիւններ (1912–1920/ԹԹ.)*, Հրատ.՝ Հայաստանի Ազգային Արխիւի, Երեւան, 2004, էջ 301): 1919ին վարած է քարտուղարութիւնը Սիմոն Վրացեանի եւ Դավիթ Անանունի խմբագրութեամբ հրատարակուող Հայաստանի Կօսակցութիւնների Միութեան պաշտօնաթերթը

Հայաստանի Կոստերացիա երկշաքաթաթերթին: Յետագային հեղինակած է կարեւոր նշանակություն ներկայացնող *Խորհրդային Հայաստանի Քնակությունը Վերջին Հարիւրամեակում (1831–1931)* հատորը (Հրատ.՝ Մեյքոնեան Ֆոնտի, Երեւան, 1932), ինչպէս նաեւ *Ճերմակ Զարդից Դէպի Կարմիր Շինարարութիւն* հատորիկը (Պետական Հրատ., Երեւան, 1929), նուիրում ճոկտեմբերեան Յեղափոխութեան տասնամեակին եւ առ ի պատասխան Դաշնակցութեան պաշտօնաթերթ *Դոշակի* մէջ Վրացեանի ստորագրած «Ճերմակ Զարդ» խորագրեալ յօդածին եւ անոր հետեւած այլ հրապարակումներու:

²⁹ Սպայակոյտի:

³⁰ 1956ին Լոնտոն աչքերը փակած Ճորճ Ֆրետերիք Հենտըլ Կրէյսի ծնած էր Պեֆասթ եւ 1904–14՝ վարած էր վերակացութիւնը Ուրֆայի Ամերիկեան Միսիոնարական Ծարտարարութեստական Հիմնարկին, որով եւ առիթ ունեցած էր ոչ միայն լաւապէս ծանօթանալու արեւմտահայ նահանգներուն, այլեւ սորվելու հայերէն լեզուն: Անգլիական բանակի Թիֆլիս տեղակայում ատաքելութիւնը զինք հաւաքագրած էր իր աշխարհագրաբեզական գիտելիքներուն համար որպէս Յատուկ Հետախուզութեան սպայ եւ առ այդ 1918ին քրտական ցեղախումբերու մօտ թրքական քարոզչական աշխատանքները չէզոքացնելու նպատակով լծուած էր աշխատանքի՝ նախքան արտաքին գործոց նախարարութեան կողմէ: Երեւան ուղարկուիլը: Պաքոփ անգլիացի փոխ հիպատոս Ռանըլտ ՄաքՏանըլ անոր վերագրած է Վանէն Իգոտի բանտինից հազար հայերու ապահով անցքին իրագործումը (John Fisher, “Man on the Spot: Captain George Gracey and British policy towards the Assyrians, 1917-1945”, *Middle Eastern Studies*, 44րդ տարի, թիւ 2 (Մարտ 2008) էջ 4–5): Օգտագործած ենք յօդածին առջակց տարբերակը հետեւեալ կայքէջէն http://eprints.uwe.ac.uk/11912/2/REF_output_MES_article.pdf, 18 Նոյեմբեր 2019ի դրոյքեամբ:

³¹ Պաշտօնական անտանումով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հիմնուած էր 1881ին, Թիֆլիս, բժիշկ Բագրատ Նաւասարդեանի նախաձեռնութեամբ: Հայ իրականութեան մէջ բարեգործական միութիւն մը ստեղծելու առաջին փորձը չէր ան, բայց մինչեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութիւնը որոշապէս ամենատարածուն բարեսիրական մարմինն էր, որ անխփոր ժամեակած է արեւելահայերու թէ արեւմտահայերու:

³² Տարական Ռուսաստանի մէջ գործածուած ծանրութեան չափ, հաւասար՝ 40 ֆունտի կամ 16.380 քիլոկրամի:

³³ Օճառ:

³⁴ Համագործակցական:

³⁵ Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական-Տնայնագործական Ընկերութիւնը հիմնուած է 1909ի Ապրիլին, միաժողովումով Ալեքսանդր Քայանթարի նախաձեռնութեամբ գործող Տնայնագործական Ընկերութեան եւ Աշ. Աթանասեանի խմբագրութեամբ հրատարակող *Գիւղապնդես* պարբերականին շուրջ հաւաքուած գիւղատնտեսներու եւ մասնագէտներու: Հարկ է դիտել տալ թէ հայկական համայնագիտարանին մէջ առանձին յօդածի չարժանացած գիւղատնտեսական ընկերութեան եւ *Գիւղապնդես* պարբերականին հետ անոր առնչութեան շուրջ շփոթ մը կայ կարգ մը աղբիւրներու մէջ: *Գիւղապնդես* շաբաթաթերթը որպէս Աթանասեանի եւ ուր հիմնադիր գիւղատնտեսներու նախաձեռնութիւն սկսած է լոյս տեսնել 25 Յունուար 1909ին, 1881ի թիւ, երբ տակափն կազմուած չէր

գիտատնտեսական ընկերությունը: Պարբերաբերթը իր երկրորդ համարով կը զգացնէ անհրաժեշտութիւնը գիտատնտեսներու համախմբումին: *Գիտարեւոյս* իր 13րդ համարով (19 Ապրիլ 1909) «Թիֆլիզի Հայոց Գիտատնտեսական-Տնայնագործական Ընկերութիւնը» խորագրեալ խմբագրական ծանուցումով կը հարորդէ հիմնադրութիւնը «ռուսահայոց մէջ առաջին գիտատնտեսական ընկերութեան» եւ անոր կանոնադրութեան հաստատման: Յետագային 15 Յունիս 1914ին երկշաբաթաբերթի վերածնունդը պարբերականը կը սկսի պաշտօնապէս լոյս տեսնել որպէս «Օրգան Թիֆլիսի Հայ Գիտատնտեսական Ընկերութեան»: Այդ առիթով Աթանասեան, որ տակաւին կը մնար պատասխանատու խմբագիրն անոր, խմբագրական նշումով մը կը յայտնէ. «Ներկայ 1914 թին «Գիտատնտես»ը դառնում է Թիֆլիսի Հայ Գիտատնտեսական եւ Տնայնագործական Ընկերութեան հրատարակութիւն եւ նրա օրգան»:

³⁶ Համառոտական Քաղաքներու Միութիւնը իշխան Կերկի Լվովի գլխաւորութեամբ 30 Յուլիս 1914ին Մոսկուայի մէջ կազմուած եւ նոյն տարուան 14 Օգոստոսին ցարին կողմէ վաւերացուած հասարակական կազմակերպութիւն մըն էր, որ Կարմիր Խաչի կազմակերպութեան նման բժշկական եւ խնամատարական աշխատանք կը ծաւալէր նաեւ Կովկասի մէջ եւ հասած է հայ գաղթականներու կարիքներուն:

³⁷ Պէտք է կարդալ Ամերիկայի Հայաստան Ընկերութիւն, որ իսկութեան մէջ լոյւմ մըն է Ամերիկեան Նպաստամատոյցին: Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը (Near East Relief) հիմնուեր էր 1915ին որպէս հետեանք Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու դէմ գործադրուած ցեղասպանութեան կապակցութեամբ անմիջական օգնութիւն ցուցաբերելու խնդրանքին, զոր ներկայացուցեր էր Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթաւ: Կազմակերպութեան սկզբնական անունը եղեր էր American Committee for Armenian and Syrian Relief: Այնուհետեւ, կարճ պահ մը, ան գործեր է American Committee for Relief in the Near East անուան տակ մինչեւ 1919ի Օգոստոս ամիսը, երբ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը պաշտօնապէս վաւերացնելով այս մարդասիրական կազմակերպութեան կանոնագիրը, անոր պաշտօնական անունը դարձեր է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց: 1930ին, վերջին անուանափոխումով մը, ան իր գործունէութիւնը շարունակեր է Near East Foundation անուան ներքեւ:

³⁸ Աեզի Էլ թուի թէ ակնարկութիւնը կը վերաբերի George Williamsի, որ յետագային պիտի դառնար Նպաստամատոյցի ներկայացուցիչը Մարզուանի մէջ եւ իր պաշտօնավարութեան շրջանին պիտի զուգադիպէր հայաքանակ գաւառներէն որբերու փոխադրութիւնը դէպի Մարզուան: Մահացած է Մարզուան 1922ի «Դեկտեմբերին»՝ հիւանդութեան մը զոհ երթալով:

³⁹ Խօսքը շատ հաւանաբար կը վերաբերի ռուսական Կարմիր Խաչի Ընկերութեան, որ Արեւքսանդր Բ. ցարին հրամանով հաստատուած էր Մեծ Իշխանուհի Ելիզաւետա Յետոդովնայի ընդհանուր պատասխանատուութեան ներքեւ եւ որ զանազան առիթներով օգնութիւն ընծայած էր աղիտեալ հայերու՝ Կովկասի, ապա նաեւ Արեւմտեան Հայաստանի ռուսական ազդեցութեան գօտիին ներակալ շրջաններու մէջ:

⁴⁰ Թէ՛ այցելու եւ թէ՛ տունը գտնուող հիւանդներու խնամք ցուցաբերող առողջապահական հաստատութիւն:

⁴¹ Հեռանային:

⁴² Յարական Ռուսաստանի մէջ գործածուած չափ, ուր 1.067 քիլոմէթրը համազօր էր մէկ վերստի:

⁴³ Բնագրին մէջ՝ *ծիւմ*:

⁴⁴ Բառը գործածուած է աւելի ընդհանրացած *բորակի* փոխարէն (Ստ. Մալխասեան, *Հայերէն Բացարարական Բառարան*, Ա. Հալոբ, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակութիւն, Երեւան, 1944, էջ 334):

⁴⁵ Վճռորոշ:

⁴⁶ Բռնակցման:

⁴⁷ Աղաաղում բառ՝ ռազմատուգանք նշանակութեամբ, շատ հաւանաբար:

⁴⁸ Այս նախադասութիւնը աւելի հասկնալի դարձնելու նպատակով կ'առաջարկենք զայն ընթերցել այսպէս.- Երբ Ռուսաստանի մէջ բոլշեւիկները յաղթանակեցին, հրահանգուեց Ռուս զինուորներին հապճեպ թողուլ ճակատ եւ դառնալ իւրաքանչիւր իր հայրենիք: Վան ըլլալով Ռուսիոյ կողմէ գրաւուած մի հողամաս, թէւ առանց անեկսիայի եւ քսեթիբիւցիայի, կրիտիքական րոպէներ սկսաւ ապրիլ, քանի որ ան շրջապատուած էր քրդերով ու տաճիկներով:

⁴⁹ Զօրավար Սովսէտ Սիլիկեան (1862–1937), որ թրքական ճակատին վրայ իր ռազմական յաջողութիւններով ուշադրութիւնը գրաւած էր ռուսական զօրքերու հրամանատարութեան, 1917ի ռուսական Փետրուարեան Յեղափոխութենէն ետք նշանակուած էր Վանի ջոկատի հրամանատար, ապա նաեւ զօրավար քաղաքապետ:

⁵⁰ Իսմայիլ աղա Շիրքաթ կամ Սիմկօ Շիրքաթ (1887–1930) ցեղապետն էր Ուրմիոյ շրջանի Բարանուղ գետին մօտ տարածուած քիւրտերու, որոնք իրենց տիրապետութիւնը տարածած ըլլալով Ուրմիոյ լիճին մերձակայ տարածքին վրայ, անմիջականօրէն մասնակից դարձած էին հայերու, ասորիներու եւ այլ քրիստոնեաներու կոտորածներուն:

⁵¹ Յուշագրող մը, որ Վանի ժամանակաւոր կառավարութեան մասին կ'ըսէ թէ ան «կը բռնէր Վանէն Ուրան, Առնիս, Բերկի, Օրդօֆ, Կօթօր եւ մինչեւ Աղբակի գաւառակը, այնքան ալ արհամարիեի ոյժ մը չէր ներկայացներ, որով թէ՛ Զիլանի ձորի եւ թէ՛ պարսկա-թրքական սահմաններու վրայ վիստացող քրդական խումբերը առանձին հետաքրքրութիւն մը կը ցուցնէին դէպի Վանի կառավարութիւնը եւ դէպի հայաշար գաառներու հայութիւնը», կ'աւելցնէ. «Անգլիացի Դրէյս անունով քաղաքական գործիչ մը մեզ անյայտ խնդիրներով կ'այցեդէր Սմկոլլին, Ճարայի իր բերդին մէջ, ուղեկցութեամբ պուլդարացի Յարութիւնի եւ իր քանի մը զինուորներու: Հայերու բարեկամական ձեռք մեկնող Սմկօն, սակայն, արդէն դաշնակցած էր Արդապարականի մէջ ի նպաստ թիրքերու գործող զանազան բախարախնդի խաներու հետ...» (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք* Ամսագիր, 1930:12, էջ 162-63):

⁵² Ալեքսանտր Կերեսկի կամ Քերեսցի (1881–1970) եղած է Ռուսաստանի Փետրուարեան Յեղափոխութենէն ետք ստեղծուած ժամանակաւոր կառավարութեան երկրորդ փոխ-վարչապետը եւ գերագոյն գլխաւոր հրամանատարը՝ մինչեւ Լենինի կողմէ իր իշխանութեան տապալումը 1917ի Նոյեմբերին:

⁵³ Գնդացի:

⁵⁴ Համակարգի:

⁵⁵ Մինչ միջազգայնօրէն ճանչցուած փառնուղ հաւասար է 453.59237 կրամի, ռուսական փառնուղ կամ ֆունտը համազօր կը նկատուի 409.51718 կրամի:

⁵⁶ Զինուորական վերակո:

⁵⁷ Կայաններ:

⁵⁵ Զորավար Թովմաս Նազարբեկեան (1855–1931) Ա. Աշխարհամարտի ընթացքին ջախջախել էր իսախլ պեյի թրքական զորաբանակը, 1917ին նշանակուած էր հայկական առանձին բանակի զորամասի հրամանատար: Յետագային, իր ընդհանուր հրամանատարութեան ներքեւ Սարդարապատի ճակատամարտը պիտի դառնար դափնեպսակը իր բազմարդին գինոտրական գործունէութեան:

⁵⁹ Գնդացի:

⁶⁰ Դատարկ տեղ ձգուած՝ որոշապէս ամսաթիւ նշելու համար, որ, սակայն, այդպէս ալ չէ նշուած:

⁶¹ Հիպատոսի:

⁶² Սիմատ Ղաճար (1898–1930) դաճարական գերդաստանի վերջին շահն էր, որ զահակալած է 1909–25 տարիներուն՝ ժողովրդավար ուժերու կողմէ զահ բարձրացուելով տասնմէկ տարեկանին: Իր իշխանութեան շրջանին կատարուած բարեփոխումներու շնորհիւ հայերուն երկու, իսկ ասորիներուն, զրադաշտականներուն ու հրեաներուն մէկական աթոռի իրաւունք շնորհուած էր խորհրդարանին մէջ:

⁶³ Մար Պենիամին Շիմուն կամ Շմոն (1887–1918) ժառանգաբար 19րդ կարողիկոս-պատրիարքը դարձած էր ասորիներու, երբ ընդամենը 18 տարեկան էր: Աղբիւրի մը համաձայն, Քոնի Շեիր կամ Քոննաշահի հայկական գիտլին մէջ քիւրտեսասորի հանդիպումը կայանալէ առաջ, հայ գիտլացի մը իր բարեկամ քիւրտէն տեղեկանալով դաադրութեան մասին, անմիջապէս իր զաւակն ուղարկած է ժամանողներն գգուցանելու համար, քայք Մար Շիմուն անունսած է գգուցացումը (Rev. W[illiam] A[inger] Wigram and Sir Edgar T. A. Wigram, *The Cradle of Mankind: Life in Eastern Kurdistan*, Լոնտոն, 1922, էջ 380): Մար Շիմունի «կտրուած, այլանդակուած դիակը» կը թարգմտի Խոսրովայի հայոց եկեղեցին («Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, 1930:2, էջ 160):

⁶⁴ Հրոսակային:

⁶⁵ Պարսիկ Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան հիմնադիր կը նկատուի Պաքուն Պարսկաստան յատուկ առաքելութեամբ ուղարկուած Հայտար Խան Ամ(ու)օղլին, 1906ին: Սկզբնապէս, անդրկովկասեան նկարագիր ունէր ան՝ Պաքուն ըլլալով դեկադարման կեդրոնատեղին, մինչեւ 1909, երբ անուանափոխուով կազմակերպութիւնը կը կոչուի Դեմոկրատ Կուսակցութիւն՝ իր գոյութիւնը շարունակելու մինչեւ 1919, Հայտար Խան Ամ(ու)օղլիի գործադիր քարտուղարութեամբ:

⁶⁶ Բնագրին մէջ՝ Նուպարին: Նուպարի որպէս ծայրայեղական գործիչ անբաստանութեամբ արտաքսուած է Ատրպէյճան:

⁶⁷ Բացայայտօրէն:

⁶⁸ «Դատարօր եւ միաժամանակ քաղաքապետ» (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, 1930:2, էջ 158):

⁶⁹ Մեյիջ-Թաւգեան (1866–1948), որ Ատրպատականի թեմի առաջնորդ կարգուած էր 1912ին, 1917ին նշանակուած էր նաեւ Վասպուրականի հայոց առաջնորդ եւ նոյն տարին իրեն շնորհուած էր արքութեան աստիճան: Իր հեղինակած գործերէն իր կարեւորութեամբ կ'առանձնանայ *Հայոց եկեղեցական Իրաւունքը* երկհատոր աշխատութիւնը (1903 եւ 1905):

⁷⁰ Յ. Ճերմակ (Յովհաննէս Բագիեան), Ատրպատականի ՀՅԴ «Վրէժ» Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչն էր (*Սարդարապատի Հերոսամարտը*, հրատարակութիւն Հ.Յ.Դ. Քալիֆ[որնիոյ] Կեդր[ոնական] Կոմիտէի, Ֆրեզնո, 1967, էջ 13–14), ինչպէս նաեւ Թարիգի կամ Դարեմի թեմական դպրոցի տնօրէնը տունալ

շրջանին, ըստ Վարդանեանի (Վարդանեան, էջ 143), որ կը քննադատէ Ճերմակի «յիմար ճառով» ժողովուրդը «աններելի անտարբերութեան» մատնելը: Ուրիշ յօշազրոյց մը կը հաստատէ թէ «Ճերմակ շատերուն համոզելով գաղթելու գործին քաականաչափ վնասած էր» (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, Ժ. տարի, 1931:1(109), էջ 150): Ճերմակի դէմ մեղադրանքներ ներկայացուած են ՀՅԴի 9րդ Ընդհանուր ժողովին որոշումով կազմուած դատական մարմնին մօտ: Մեղադրողներէն մին էր Մաքսապետեան՝ Սալմաստի ինքնապաշտպանութեան գծով: Ուրիշ մեղադրող մը՝ Արամ Աղաբէկեան, պարզապէս Ճերմակի վրայ կը բարդէր պատասխանատուութիւնը նախ համոզելու որ Սալմաստ գտնուող հայութիւնը չգաղթէ Կովկաս, երբ ճամփաները տակաւին չէին օղակուած յառաջացող թրքական ուժերուն կողմէ, ապա «երբ Կովկասի դռները արդէն փակուած էին», ժողովուրդին ուշադրութիւնը «դարձուցած է դէպի Կովկաս» (Ասազ Ա. Յարութիւնեան, «ՀՅ Դաշնակցութեան 1918-1920ԹԹ. Պատմութեան Վաւերագրերը», *Վէմ Համահայկական Հանդէս*, ԺԱ. տարի, 2013:3(43), էջ 203-8):

⁷¹ Բնագրին մէջ *ջանաց*:

⁷² Վերապատմելի Ուիլիամ Շէտ (William Ambrose Shedd), ծնած Ուրմիա 1865ին եւ մահացած Պարսկաստան 1918ին, զաակն էր ամերիկեան միսիոնարներու եւ որպէս շրջանի երեւ միսիոնար նախապատերազմեան տարիներուն անպաշտօն կերպով նաեւ որպէս ամերիկեան հիպատոս գործելէ ետք, Առաջին Աշխարհամարտի տարիներուն պաշտօնապէս դարձած էր ամերիկեան հիպատոս՝ ընթացք տալով Դաւրէժի ամերիկեան հիպատոսին պնդումներուն: Օսմանեան քանակին Ուրմիոյ վրայ յարձակման հետեանքով Շէտ միացած էր քազմահազար հայ եւ ասորի գաղթականներու եւ գաղթի ճամփուն վրայ Յուլիս ամսուն մահանալով հնդկաստ, թաղուած է Սային Քալայի մէջ: Շէտի հոգեհանգստեան արարողութիւնը կատարուած է Մարաղայի հնամենի հայկական եկեղեցւոյ մէջ (Mary Lewis Shedd, *The Measure of a Man: The Life of William Ambrose Shedd, Missionary to Persia*, Նիւ Եորք, 1922 եւ Michael Zirinsky, "American Presbyterian Missionaries at Urmia During the Great War," in *Proceedings of the International Roundtable on Persia and the Great War* (Tehran: Iran Chamber Society, 1997), http://www.iranchamber.com/religions/articles/american_presbyterian_missionaries_zirinsky.pdf, 18 Նոյեմբեր 2019ի դրութեամբ):

⁷³ Կարելի չեղաւ ստուգել ինքնութիւնը յիշեալին:

⁷⁴ Զինուորներ:

⁷⁵ Կը թուի թէ ակնարկեալը հոյ ծնած Մոհամմէտ Ալի Ալա՝ ալ-Սալթանէն է (1829-1918), Յունիս 28ին մահացած նախկին վարչապետը Իրանի:

⁷⁶ Կը թուի թէ տեղեկագրողը ըսել կ'ուզէ «9րդ վարչապետէն»: 1906ին վարչապետութիւնը պաշտօնապէս հաստատուելէ ետք, մինչեւ Միրզա Մոհամմէտի առաջին վարչապետութիւնը, պաշտօնավարած էին տաս վարչապետեր: Կրնայ համարակալման սխալի մը հետեանք ըլլալ 9ը:

⁷⁷ Հրամանատարէ:

⁷⁸ Երախաներուն:

⁷⁹ Պետրոս Էլիա (1880-1932) ծնած էր Հաքքարի եւ Ուրմիոյ մէջ եւրոպացի միսիոնարներու մօտ կրթութիւն ստանալէ ետք վերադարձած էր իր ծննդավայրը՝ զբաղելու ուսուցչութեամբ: Իր լեզունձձն հմտութիւնները նկատի ունենալով,

օսմանեան կառավարութիւնը զինք 1909ին կարճատեւ պահ մը հիպպատոս նշանակած էր Ուրմիոյ մէջ: Ռուսեր Ուրմիան գրաւելով զինք նշանակած էին զօրավար՝ ասորական զօրախումբի: Աւելի ուշ գործակցած էր Համաձայնական Պետութիւններու հետ եւ յաղթական մարտեր մղած օսմանեան ուժերու ղեմ: 1919–23՝ իբրեւ ասորիներու գլխաւոր բանագնաց մասնակցելով Ազգերու Լիկայի Խաղաղութեան Վեհաժողովի աշխատանքներուն, առանց յաջողութեան հասնելու փորձած է Հանրապետական Թուրքիոյ հաւատարմութիւն խոստանալով ապահովել իր ազգակիցներուն Հաքքարի եւ շրջակայքը վերադարձը:

⁸⁰ Գնդապետ:

⁸¹ Ռուսական բանակին մէջ ծառայած ծագումով կազակ սպայ, որ Մար Շմոնի ուղեկիցն էր եղած Սմկոյի դաւադրական հրաւերի ընթացքին, բայց կրցած էր փախուստ տալ վիրաւոր վիճակով:

⁸² Աղա Դաւութ (Տափտ Շիմունայեա) քիւրտ ցեղապետ Սմկոյի կողմէ դաւադրաբար սպանուած Մար Շմոն կաթողիկոս-պատրիարքի եղբայրն էր: Դաւութ, Տաւոտ, կամ Տափտ Առաջին Աշխարհամարտի ընթացքին կը գլխաւորէր ասորի կամաւորներու խումբերէն մին եւ օտար աղբիւրներու մէջ կը յիշատակուի որպէս զօրավար: Ան Սմկոյի դաւադրութեան ընթացքին չէր մահացած եւ իր խորհրդատր փրկութեան շուրջ կան զանազան տարբեր տեղեկութիւններ, որոնք, սակայն, կը համընկնին մէկ կէտի շուրջ, թէ՛ Դաւութ կրցած էր զինք հետապնդող քիւրդներու ձեռքը չիյնալ շնորհիւ հայերու: Աղբիւր մը կը նշէ թէ բարեկամ հայեր վիրաւոր Տափտը յափշտակելով տարին եւ պահեցին մերձակայ տան մը մէջ մինչեւ քրտական որոնումներու ատարը (Wigram and Wigram, էջ 380): Ըստ երկրորդ աղբիւրի մը, Դաւութ, որուն ճակատագիրը անյայտ կը մնար, հայ սուրհանդակի մը միջոցով լուր կը դրկէ իր զինակիցներուն թէ հինգ զինուորներու հետ կը գտնուի Սալմաստի հայկական եկեղեցին: Լուրն ստանալով, պատուիրակութեան ընկերացած ռուս սպայ Կանտուրաւտը (աղբիւրին մէջ՝ Kondratov) եւ ասորի սպաներ իրենց հետետրոյններով յաջորդ օրն իսկ, Կիրակի կէսօրին, յարձակում մը գործելով կ'ազատագրեն Դաւութը (Gabriele Yonan, *Let's We Perish: A Forgotten Holocaust – The Extermination of the Christian Assyrians in Turkey and Persia*, 1996, էջ 98–99 [ներքենտում 19 Նոյեմբեր 2019ին հետեւեալ կայքէջէն՝ <https://www.peacepalace.library.nl/ebooks/files/380604434.pdf>]): Երրորդ աղբիւրի մը համաձայն, հայ կին մը ապաստան տուած է Դաւութի, մինչ քիւրդներ զինք կը փնտռէին գիշերով, եւ յաջորդ ատու զինք ապահով դուրս հանած է աւանէն (William A[inger] Wigram, *Our Smallest Ally: A Brief Account of the Assyrian Nation in the Great War*, հրատարակութիւն Քրիստոնէական Գիտելիք Տարածող Ընկերութեան, Նիւ Նորք, 1920, էջ 40):

⁸³ Զօրավար Անդրանիկ Օզանեան (1868–1927), Ազգային Հերոս:

⁸⁴ Հետախուզում:

⁸⁵ Բրիտանական օդուժի սպայ հարիւրապետ Ք. Մ. Փեննինկլըն Համատան հաստատուած զօրավար Տանսթըրվիլի հրահանգով ներկայացած էր Ուրմիա: Թուականը՝ Յուլիս 8, կը հաստատէ վերապատուելի Ուկլըրմ (Wigram, էջ 47), մինչ ամէլի նոր հրատարակութիւն մը սխալմամբ կը նշէ Յուլիս 18 ամսաթիւ (Yonan, էջ 93): Այս վերջին աղբիւրը, իդէպ, կը նշէ թէ օդանաւորը վայրէջք կատարած է ի հեճուկս ասորի զինեակներու, որոնք սկսած էին կրակել օդանաւին ուղղութեամբ: Պարագան կը հաստատեն նաեւ այլ աղբիւրներ (օրինակ՝ Wigram and Wigram, էջ 384):

⁸⁶ Պարսկական կառավարությունը բրիտանական ընկերության մը շնորհած էր Թարիզէն Միանա կամ Միանէ երկարող ճանապարհաշինութեան պայմանագիրը: Պայմանագրին մէջ ընդգրկուած էր նաեւ Զանճանէն կամ Զէնճանէն Պիճար ձգող ճանապարհը, 8էն 9 մեթր լայնութեամբ եւ 143 քիլոմետր երկարութեամբ:

⁸⁷ Գնդապետի:

⁸⁸ Բնագիրը սխալագրութեամբ ունի՝ *Ալի Իսհան*: Յիշեալը (1882–1957) Առաջին Աշխարհամարտի շրջանին գործած էր որպէս Կովկասի եւ Միջագետքի ճակատներու հրամանատար: Քուբի մէջ, Իրաք, անգլիացիներուն դէմ յաջող մարտեր մղելէ ետք, իր բանակով մուտք գործած էր Պարսկաստան: Ան մէկն էր Մալթա արքայութեամբ, բայց 1921ին ազատ արձակուած դէմքերէն, որոնք պիտի միանային Աթաթուրքի ազգայնական շարժման:

⁸⁹ Թ. Խ. Յակոբեանի, Ստ. Տ. Մելիք-Բախշեանի եւ Յ. Խ. Բարսեղեանի աշխատասիրութեամբ եւ Երեւանի Պետական Համալսարանի հրատարակութեամբ լոյս տեսած *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարանի* Տրդ. հատորին մէջ (Երևան, 2001, էջ 194) կը հանդիպենք Ուրմիա լիճէն հարաւ, Պարսկահայքի մաս կազմող Ուշնէ տեղանուն, որ նաեւ կը հնչուի Ուշնմէ, Եւշնէ, Ուշնոս, Ուշնոհէ, Ուշնոսի, Ուշնունէ եւ կը ներկայացուի որպէս կեդրոնը Նոր Շիրական բոլշխութեան Արասի գաւառին: Իր Ուշնի տարբերակով, սակայն, բնակավայրը յիշատակուած է Ռաֆֆիի ճամփորդական նոթերուն մէջ, ուր կ'ըսուի թէ հոն տաճիկ զինուորներ հինգ, տասն հոգիներով բաժնուած կ'ըլլան հայերու տունները եւ խղճալի հայ ընտանիքները իրենց քաղաքական եւ նիւթական գոյութեամբ կը գոհովին տաճիկ ասկերի զինուորներու լրբութիւններուն: Իսկ Ե. Ֆրանզեան վայրը յիշատակած է զանազան էջերու մէջ, ինչպէս – օրինակ – որպէս նախ ընդամենը երկու հայ ընտանիք ունեցող վայր եւ ապա երբեմնի ասորաբնակ գաւառ (*Ասորայական (Պարսկերազարդ Ժողովածոյ)*, Թիֆլիս, 1905, էջ 84 եւ 249 համապատասխանաբար):

⁹⁰ Վաշտ:

⁹¹ Կովկասեան ճակատի թրքական զօրքերու ընդհանուր հրամանատար Խալիլ Քուբ (1882–1957), որ Քուբի պաշարումով հարկադրած էր անգլիական ուժերու անձնատուութիւնը Իրաքի մէջ 1916ին, կը պարծենար թէ անձամբ կոտորած է բազմահազար հայեր եւ փորձած է հայ ազգը բնաջնջել մինչեւ վերջին անհատ: Խալիլ արեւակից էր Հայոց Յեղասպանութեան գլխատը ճարտարապետներէն Էմվերի:

⁹² Աէկ բուռ:

⁹³ Մարգաւառ եւ Թարգաւառ (նաեւ՝ Թերգաւառ) ասորական բնակավայրեր էին Ուրմիա Լիճի արեւմտակողմը: Ներկայիս առանելաբար բնակեցուած են քիւրտերով:

⁹⁴ Պըհար կամ Պահար (په‌وار), Համատանի վարչաշրջանային գլխատը քաղաքներէն մին:

⁹⁵ Լեւոն Շաղոյեան (1887–1933) նախապէս ակնառու մասնակցութիւն ունեցած էր 1915ի Շատախ գաւառի ինքնապաշտպանական մարտերուն եւ Վանի առաջին ժամանակատը կառավարութեան շրջանին վարած էր Գաւաշի գաւառապետութիւնը:

⁹⁶ Արշինա կամ Արշինէ (ارشینه), Համատան նահանգի գիւղերէն մին:

⁹⁷ Իր ընտիր այգիներով յայտնի Համատանի հայկական գիտերէն ۱۹۱۷-ի անունը կը
հնչուի նաեւ Շեւերին, Շավարին, Շառաւրին, Շեարին, Շուարին եւ Շորին:

A CONTEMPORARY REPORT PRESENTING THE ACTIVITIES OF VAN'S SECOND
TEMPORARY GOVERNMENT AND THE LAST EXODUS

(Summary)

VATCHE GHAZARIAN

vatcheg@gmail.com

The Russian Revolution of October 1917 was followed by a call to the Russian troops to return home from the Turkish front, where they were viewed as liberators of historical Armenian lands. The recall of Russian soldiers signaled an opportunity for the Turkish army to move upon and repossess the vacated historical Armenian territories, and it was a signal to the Armenians to think of their own survival. Thus, the Armenians of Van formed a government, which became known as the Second Temporary Armenian Government of Van. The government's purpose was to organize life in Van, normalize relations with nearby Kurds, if possible, and strengthen ties with neighboring Assyrians. This was all done with the backing of the British military headquartered in Tbilisi, Georgia. However, the eastward advance of the Turkish army and the intensification of armed hostilities by Kurds in and around Van forced the temporary government to shift attention towards a safe relocation of the Armenian population to Armenia through Iran. This migration of Armenians of Van became known as the Last Retreat or Exodus of Van. While many eyewitness accounts and memoirs relating to this temporary government and the events that took place during the exodus exist, this report may serve as the most reliable source, not only as to its correctness but also as to its completeness with regard to what is known to date about the temporary government and the migration. It also sheds light on the roles played by the British, Russian, Turkish, Kurdish, Iranian, and Assyrian players in the region. The report covers the period from December 1917 through November 1918 and was written no later than in January 1919 by the minister of agriculture of the temporary government, upon the request of close surviving associates.

